19311

328(47.924)
Ձh-21

328(47.924)
Ա-21

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

# ՀԱՄԱԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ
ԲԱԳՈՒ—1935

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԱՍԽՀ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ 8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ


1. Կառավարության հաշվետվության առթիվ — 3
2. Լուսժողկոմատի զեկուցման առթիվ — 24
3. Ճանապարհային շինարարության մասին զեկուցման առթիվ — 33
4. Սահմանադրական հարցերի մասին զեկուցման առթիվ — 37
5. 8-րդ հրավերի համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր կոմիտեյի կազմը: — 48



15 JAN 2010

328(47.924)
Ա-21

27 SEP 20


ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ


ИНВ. № 890

342.53(47.9


# ՀԱՄԱԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԵՐԸ


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ
ԲԱԳՈՒ—1935

- .01. 2013
19311
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникова
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
43118-63

Թարգմանեց Կ. ԶԱԼԱԲԻ
Տեխ. խմբագիր Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

Главлит № 2554
Заказ № 1693
Тираж 1000
Тип. „III Интернационал". Баку.

# I. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Խորհուրդների 8-րդ Համագումարը լսելով ու քննելով Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ ընկ. Հյուսեյն Ռահմանովի զեկուցումը 7-րդից մինչև 8-րդ համագումարը ժամանակամիջոցում Ադրբեջանի կառավարության աշխատանքի մասին, կառավարության քաղաքական գիծը համարում է ճիշտ և լիովին հավանություն է տալիս նրա գործունեությանը:

8-րդ համագումարը գոհունակությամբ է նշում, որ վերջին տարիներում Խորհրդային Միությունը խոշոր հաջողություններ է ձեռք բերել սոցիալիստական շինարարության բնագավառում, հաջողությամբ ավարտելով առաջին հնգամյակի պլանը 4 տարում և յերկրորդ հնգամյակի առաջին յերկու տարվա պլանը: Առաջին հնգամյակի տարիներում կառուցված է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը: Յերկրորդ հնգամյակի առաջին յերկու տարում արված է նոր, հսկայական քայլ առաջ՝ անդասակարգ սոցիալիստական հասարակություն կառուցելու գործում: ԽՍՀՄ վերափոխվեց հզոր ինդուստրիալ յերկրի և աշխարհում ամենախոշոր սոցիալիստական գյուղական տնտեսությունով յերկրի: Սոցիալիզմը դարձել է «անբաժանելի, գերիշխող և միակ հրամանատար ուժն ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ» (Ստալին): Վերջնականապես հաղթանակեց կոլտնտեսային կարգը և, ամբողջովին ջախջախված է կուլակությունը—բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության կատաղի թշնամին: Ձեռք բերված հաջողությունները ապահովեցին Խորհրդային Մի

ության պաշտպանունակության ամրապնդումը, մեր մեծագույն հայրենիքի զինված պահակի—Կարմիր բանակի հզորության ամրապնդումը:

Վերջին տարիներում ձեռք բերված տնտեսական-քաղաքական հսկայական հաջողությունների ու խորհրդային կառավարության խաղաղության քաղաքականության հաստատ կիրառման հետևանքով, ամրապնդվել են դիրքերը և աճել է Խորհրդային Միության հեղինակությունը միջազգային ասպարեզում:

Յերկրի ինդուստրացումը և գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը պայմանավորեցին ձևով ազգային և սոցիալիստական ըստ բովանդակության ազգային կուլտուրայի հզոր ծաղկումը, յերկրի բանվորների, կոլտնտեսականների ու բոլոր աշխատավորության բարեկեցության և նյութական – կենցաղային դրության վերելքը: Այդ խոշորագույն, համաշխարհա-պատմական նշանակության հաղթանակները ձեռք են բերված լենինյան կուսակցության և նրա ստալինյան Կենտկոմի ղեկավարությամբ, մեծ Ստալինի ղեկավարությամբ՝ անխնա պայքարելով դասակարգային թշնամու և նրա գործակալության, —աջ և «ձախ» օպորտունիստների, հակահեղափոխական տրոցկիզմի և զինովևյան-կամենևյան հակահեղափոխական խմբակի դեմ, վորի յերեկվա արհամարհված թափթփուկները կանգ չառան ամենաստոր վոճրի առաջ — սպանելով կուսակցության և բանվոր դասակարգի փառապանծ ղեկավարներից մեկին — Սերգեյ Միրոնովիչ Կիրովին:

Խորհրդային Միության հսկայական հաջողություններն առանձնապես ուժգին են շարունակվող այն խորագույն տնտեսական ճգնաժամերի և հատուկ տեսակի դեպրեսիաների ֆոնի վրա, վորը ցնցում է Յեվրոպայում, Ասիայում և Ամերիկայում արտադրության կապիտալիստական ձևի հենց հիմքերը և կապիտալիստական յերկրներից խլում են տնտեսությունը մինչճգնաժամային ժամանակաշրջանի բարձրացնելու և բազմամիլիոն գործազրկությունը վերացնելու հնարավորությունը:

Համագումարը հատուկ գոհունակությամբ է նշում Խորհրդային Միության անբաժանելի մասի—Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսական և քաղաքական ամրապնդումը՝ ԱՍՖՍՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների նախաձեռնության և ինքնագործունեության լայն ծավալման հիման վրա: Համագումարը շեշտում է, վոր Անդրֆեդերացիայի փայլուն հաջողությունները հետևանք են նախկին տարիներում թույլ տված քաղաքական սխալների — առանձնապես գյուղացիական հարցում, — վճռականորեն ուղղելուն: Այդ սխալների ուղղումը ձեռք են բեր-



ված Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի և անձամբ ընկ. Բերիայի բոլշևիկյան ղեկավարությամբ՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի Անդրկովկասի մասին 1931 թ. հոկտեմբերի 31-ի պատմական վորոշումն իրագործելու հիման վրա:

Հսկայական աշխատանք է տարված արդյունաբերության զարգացման և գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում: Ընթացիկ տարիների ընթացքում Անդրկովկասի էներգետիկ բազան հարստացել է՝ շահագործման մեջ դնելով խոշոր ռայոնական ելեկտրոկայանները (Ռիոնգես, Ձորագես) Անդրկովկասը — Խորհրդային Միության մարգարիտը — ագրարայինից կերպարանափոխվել է ինդուստրիալ-ագրարային յերկրի, դարձել է ԽՍՀ Միության առաջավոր յերկրներից մեկը:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի և անձամբ ընկ. Բերիայի միջոցառումներն ապահովեցին—բացառապես՝ անցյալ տարիների հետ համեմատած—գյուղական տնտեսության հաջողությունները, լայն ծավալեցին մելիորատիվ և ջրաբաշխական աշխատանքները: Մերձարևադարձայինների ընդարձակմամբ Անդրկովկասը հիմնականում դարձավ Միության մերձարևադարձային կուլտուրաների բազան: Բավականաչափ լավացել է տրանսպորտի աշխատանքը: Աճում ու ամրապնդվում է ապրանքաշրջանառությունը:

Ձեռք են բերված հսկայական հաջողություններ ինտերնացիոնալ միասնության և յեղբայրական աշխատակցության գործում՝ Անդրկովկասի աշխատավորների մեջ լենինյան – ստալինյան ազգային քաղաքականության ճիշտ կիրառման և ամբողջ Անդրկովկասի աշխատավորների կատաղի թշնամիների — մուսավաթիստների, դաշնակների և մենշևիկների դեմ անխնա պայքար մղելու հիման վրա:

Անդրֆեդերացիայի ու ամբողջ Խորհրդային Միության ազգային հանրապետությունների յեղբայրական ընտանիքում աճում և ամրապնդվում է Խորհրդային Ադրբեջանը:

Առանձնապես խոշոր են Ադրբեջանի ինդուստրիայի առաջատար ճյուղի—նավթային արդյունաբերության հաջողությունները:

Համագումարը նշում է, վոր ԱՍԽՀ նավթային արդյունաբերությունը, հանդիսանալով ամբողջ Խորհրդային Միության հեղուկ վառելիքի հիմնական բազան, այն չորս տարվա ընթացքում, վոր անցել է Խորհուրդների Ադրբեջանի 7-րդ Համագումարից հետո, խոշոր հաջողություններ է ձեռք բերել: Առանձնապես նշանակալից են հաջողությունները 1933-34 թ.թ.: Նավթի

հանումը 1933 թ. համեմատած 1932 թվի հետ ավելացել է 3,1 միլիոն տոննով, 1934 թվին 3,9 միլիոն տոննով՝ ի դեմ 1933 թ. և 1933 թ. 7 միլիոն տոնն ավելի, քան 1932 թ.: Նավթ է մշակված 1,343 հազար տոնն ավելի, քան 1933 թվին:

Հերոսական Բաքվի պրոլետարիատն այս հաջողություններին հասել է մեծ Ստալինի անմիջական ղեկավարությամբ, Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության ղեկավարությամբ և Անդրերկոմի, Կուսակցության Կենտրոնական և Բաքվի Կոմիտեների կոնկրետ օպերատիվ ղեկավարության շնորհիվ:

Համագումարը նշում է, որ այդ հսկայական հաջողությունները ապահովող հիմնական պայմանը հանդիսանում է կուսակցության և կառավարության կողմից ձեռք առած միջոցառումները՝ նավթային արդյունաբերության վճռական տեխնիկական վերակառուցման և ժամանակակից առաջավոր տեխնիկայի մտցնելով և Բաքվի բանվորների հերոսական պայքարը տեխնիկային տիրապետելու և յուրացնելու համար:

Արագ տեմպերով զարգանում է Ադրբեջանի մյուս արդյունաբերությունը:

Համագումարը հատուկ նշում է, որ երկրի սոցիալիստական ինդուստրացման ընթացքում սկիզբը է դրված իրականացնելու արդյունաբերության կանոնավոր աշխարհագրական տեղավորման և հետ մնացող ռայոնների առաջ քաշման, որի հետևանքով ամրացված է ինքնավարությունների արդյունաբերությունը և արդյունաբերության նոր օջախներ են ստեղծված Նուխիում և Կիրովաբադում, որը դարձել է Ադրբեջանի ինդուստրիալ երկրորդ կենտրոնը:

Հաշվետու ժամանակաշրջանում արմատական վերակառուցման են ենթարկված արդյունաբերության կարևորագույն ձեռնարկությունները. կառուցված և շահագործման մեջ են մտցրված մի շարք նոր ձեռնարկներ (Բաքվի կարի և կահ-կարասիքի ֆաբրիկաները, մետաքսագործական կոմբինատը Նուխիում, փորձնական կավահողային գործարանը Կիրովաբադում), նորերս ըստեղծված է խաղա-բրոմային, մսային, պահեցնող արդյունաբերությունը, ծավալված է խոշորագույն տեքստիլ կոմբինատի և Միության մեջ միակ տակառագործական տառանտալշինության կառուցումը. պատրաստված են մի շարք կարևոր արդյունաբերական կոմբինատների կառուցումը, որոնք խոշորագույն ժողովրդա-տնտեսական նշանակություն ունեն (մետաղագործական, ալյումինի, ազոտա-տուկային, սինթետիկ կաուչուկի, տեքստիլի), գտնված են ազնիվ և գունավոր մետաղների տեղեր, որոնք թույլ են տալիս մոտակա տարիներում այդ բազայի վրա նախապատրաստական աշխատանքներ տանել նոր խոշորագույն ձեռնարկների կառուցման համար:



Արդյունաբերության մեջ ներդրված կապիտալը չորս տարվա ընթացքում կազմում է 962 միլիոն ռուբլի: Ընդհանուր արտադրանքը 1934 թ. աճեց մինչև 1.306,8 միլիոն ռուբլի, ի դեմ 1930 թ. 645,5 միլիոն ռուբլու:

Խոշոր հաջողություններ են ձեռք բերված գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում:

ԱՍԽՀ կոլեկտիվացրած տնտեսությունները 1931 թ. 55304-ից հասել են մինչև 213.208 1934 թ.—56,3 տոկոս:

Կոլտնտեսությունների ցանքային տարածությունը 1931 թ. 290.410 հեկտարից աճել է մինչև 1934 թ. 626.940 հեկտ.:

ՄՏԿ թիվը 1930 թ. յերկուսից՝ 143 միավորից բաղկացած տրակտորային պարկով—1934 թ. աճել է մինչև 40, 2.089 տրակտորային միավորով:

Խորհտնտեսությունների, կոոպտնտեսությունների և բանմատբաժինների տնտեսությունները 1931 թ. 68 միավորից 1934 թվին աճել են մինչև 120:

Կոլտնտեսությունների անասնա-ապրանքային ֆերմաների խոշոր եղջերավոր անասունների հոտը 1931 թ. 39,7 հազարից 1933 թ. հասել է 66,8 հազար գլխի:

Այդ նույն ժամանակամիջոցում ոչխարի հոտը ֆերմաներում 88.350 հազար գլխից աճել է մինչև 205,32 հազար գլխի:

Համագումարն առանձնապես մատնանշում է Ադրբեջանի կառավարության տարած խոշոր աշխատանքը 1933–34 թ.թ. գյուղական տնտեսության կուլտուրաների բերքատվության բարձրացման վերաբերմամբ, առհասարակ, և մասնավորապես բամբակինը:

Ադրբեջանը դարձել է բամբակային երկրորդ հիմնական բազան և յեգիպտական բամբակի առաջին բազան:

Բամբակամթերման 1934 թ. պլանը—136 հազար տոնն հում բամբակ—գերակատարված է 111,2 տոկոսով: Գերակատարված է նույնպես պետական հիմնական մթերումների պլանը.— հացահանձնումը կատարված է ժամանակից առաջ 110,3 տոկոսով, միևնույն թվում խորհտնտեսությունները 136,9 տոկոս, ՄՏԿ բնավճարը—128,2 տոկոս, չալթուկի հանձնումը կատարված է ժամկետից առաջ — 105,2 տոկոս, խոտինը — 100,7 տոկոս, մթերղենի պլանը կատարված է 105,5 տոկոս, յուղինը —

139,7 տոկոս, պանրինը—149,1 տոկոս, կարտոֆիլի պլանը 109,5 տոկոս:

Կոլտնտեսությունների և կոլտնտեսականների եկամուտները տարեց-տարի աճում են: Ադրբեջանի կոլտնտեսականները 1934 թ. վերջնականապես և անվերադարձ կանգնեցին ունևոր կյանքի ուղու վրա:

Լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության ճիշտ կիրառումը, պայքարը՝ ինչպես մեծապետական, այնպես էլ տեղական շովինիզմի ամենայն տեսակի արտահայտությունների դեմ, հասցրին անցյալում չտեսնված, ազգային ըստ ձևի և սոցիալիստական ըստ բովանդակության կուլտուրայի ծաղկմանը, մասնակից արին ստեղծագործական սոցիալիստական շինարարության գործին Ադրբեջանի բազմազգի բոլոր ժողովուրդներին և ապահովեցին Նախ. ՍԽՀ և Լեռն. Ղարաբաղի տնտեսա-կուլտուրային գործի զարգացման խոշոր հաջողությունները:

## ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

1. Ադրբեջանի նավթային արդյունաբերության առաջ 1935 թվին դրված խնդիրը—տալ երկրին 22 միլիոն տոնն նավթ, պահանջում է անխնա պայքար մղել ինքնահանգստացման և բարեհոգության ամենայն տեսակի տարրերի դեմ և մոբիլիզացիայի ենթարկել բոլոր ուժերն ու ջանքը նավթի պլանի կատարման և գերակատարման համար:

Համագումարը հատուկ ուշադրություն է դարձնում նավթային արդյունաբերության նշանակալից, չօգտագործված պահեստների (ռեզերվի) վրա: Դա առաջին հերթին վերաբերում է հորատմանը, որը հանդիսանում է վճռական և մինչև հիմա դեռևս հետամնաց տեղամաս նավթային արդյունաբերության մեջ:

Համագումարը պարտավորեցնում է կառավարությանը՝ ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ հորատման գործում ամերիկական արագության հասնելու և ժամանակից առաջ տեխնիկայի արմատացմանը հետապնդյում:

1935 թ. պլանի համար հիմնական պայքարը համագումարը համարում է ընկ. Ստալինի — տեխնիկային տիրապետած մարդկանց հոգատարության մասին ցուցմունքի կատարումը: Համագումարը պարտավորեցնում է կառավարությանը բոլոր միջոցները ձեռք առնել՝ ապահովելու ընկ. Ստալինի այդ պատմական ցուցմունքները կատարելու համար և այդ ցուցմունքը դնել Ազնեֆթի բոլոր աշխատանքների անկյունաքարին: Տեխնիկային տիրապետած մարդկանց մասին հոգատարությունը պետք է մղի ու հորատման ամերիկական արագության, մեքենայացված նավթահանման աճի, աշխատանքի արտադրողականության և նավթային արդյունաբերության բոլոր որակական ցուցանիշների հաջողությունը և հենց դրանով ապահովի 1935 թվի պլանը:

Համագումարը կառավարության առաջ խնդիր է դնում—ամեն կերպ բարձրացնել նավթային արտադրանքի որակը—բենզինի, յուղերի և այլն, ու պարտավորեցնում է բոլոր միջոցները ձեռք առնել, որոնք անհրաժեշտ են նավթային հետախուզումների հետագա ընդլայնելու համար Ադրբեջանում և նավթաբեր նոր հրապարակներ նախապատրաստելու՝ երկրորդ հնգամյակում նավթահանության պլանի ապահովման համար:

2. Չնայած հանրապետության էլեկտրաշինարարության բնագավառում ձեռք բերած հաջողություններին, էլեկտրիֆիկացիայի տեմպերն անցյալ տարիներում այնուամենայնիվ շարունակում են հետ մնալ ժողովրդական տնտեսության ընդհանուր աճումից: Առանձնապես էներգիայի սուր կարիք է զգացվում կարևորագույն ինդուստրիալ կենտրոններում—Կիրովաբադում և Նուխում:

ԱՍԽՀ բոլոր ռայոններում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետագա նորմալ զարգացումն ապահովելու համար, համագումարը հանձնարարում է կառավարությանը, գոյություն ունեցող էլեկտրոկայանների շահագործման հետագա բարելավման հետ միասին, ապահովել 1935 թ. երկրորդ հերթի Կիրովաբադի, Նուխու և Ղուբայի ԳԷՍ ավարտումն ու շահագործման հանձնելը և դրա հետ միաժամանակ արագացնել տեղական կոմունալ տնտեսությունների էլեկտրոկայանների հետագա կառուցումները:

Խոշոր տնտեսական-քաղաքական նշանակություն տալով Թարթառ ԳԷՍ-ի կառուցմանը, համագումարը հանձնարարում է կառավարությանն ամեն կերպ արագացնել սկսած նախապատրաստական աշխատանքները՝ Թարթառի հիդրոկայանի կառուցման համար:

Հաշվի առնելով ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը և նրան էժան էլեկտրոուժով ապահովելու անհրաժեշտությունը, նույնպես և կոմունալ տնտեսությունների և ազգաբնակության կենցաղային պահանջների բավարարումը, համագումարը մոտակա շրջանի կարևոր խնդիրն է համարում հանրապետության ջրային-էներգետիկ միջոցների մանրամասն ուսում-

նասիրությունը և նախագծային ու նախապատրաստական բազա-յով ապահովելը, դրանց հետ հանգուցված պրոբլեմների (Մին-գեչաուր, Թարթառ) միասին և էլեկտրոշինարարության մանր օբյեկտները:

3. Համագումարը մատնանշում է հանրապետական արդյու-նաբերության կողմից վորակական ցուցանիշների անբավարար կատարումը, աշխատանքի արտադրողականության հետ մնալը աշխատավարձի աճից, արտադրանքի հիմնական տեսակների բարձր ինքնարժեքը, ապրանքի վատ վորակը, առանձնապես թեթև արդյունաբերության մեջ դադարներն ու կարևոր և թան-կարժեք սարքավորումների համախակի ավարիաները, բանուժի վոչ ճիշտ դասավորումն ու օգտագործումը:

Ընթացիկ տարիներում արդյունաբերության ամենաթույլ տեղամասը համագումարը համարում է քաղխորհուրդների և ռայգործկոմների ստորին արդյունաբերությունը և տնայնագոր-ծական արդյունաբերությունը: Մի շարք կազմակերպություննե-րի և առանձնապես ռայգործկոմների ու քաղխորհուրդների կող-մից ժողովրդական տնտեսության այդ կարևոր տեղամասի մի-անգամայն անթույլատրելի թերագնահատման շնորհիվ, ստորին արդյունաբերությունը տարեց-տարի չի կատարում իր արտադրա-կան պլանները և հաճախ վատորակ արտադրանք է թողարկում:

Համագումարը գտնում է, վոր հանրապետական ստորին և կոոպերատիվային արդյունաբերության մատնանշված թերու-թյունների հիմնական պատճառները հանդիսանում են դեռևս մի-ալին չվերացված արտադրության ղեկավարման գրասենյակա-յին–բյուրոկրատական մեթոդները, կառավարության և կուսակ-ցության վորոշումների հիման վրա աշխատանքի թույլ վերակա-ռուցումը, միանձնավարության և ընկ. Ստալինի պատմական 6 ցուցումներին վոչ բավարար արմատացումը, դեպի բանվորնե-րի նյութական-կենցաղային սպասարկմանն անբավարար ուշա-դրությունը, ձեռնարկներում մասսայական կուլտուրական-լու-սավորչական աշխատանքի անբավարար դրումը:

Երկրի հետագա ինդուստրացման խնդիրները պահանջում են, արագ կերպով վերացնել գոյություն ունեցող թերություննե-րըն ինչպես արտադրության և աշխատանքի կազմակերպման բնա-գավառում, նույնպես և արդյունաբերական նոր ձեռնարկների և գոյություն ունեցող հների վերակառուցման գործում: Դրա հետ կապակցված համագումարն անհրաժեշտ է համարում ուժեղաց-նել պայքարը՝ 1935 թ. արտադրական պլանների կատարման, արտադրանքի վորակի ամեն կերպ բարձրացման, աշխա-



տանքի արտադրողականության սուր կերպով բարձրացման, ինք-նարժեք իջեցման, խոտանքի վերացման, աշխատանքային կար-գապահության ուժեղացման և միանձնավարության ամրապնդ-ման, աշխատանքի կուլտուրական շրջապատի, առողջության և հարմարածայնության հետագա ծավալման, տնտհաշվարկի ամրա-պնդման, արտադրության տեխնիկայի լիակատար յուրացման, տեմպերի արագացման և հիմնական շինարարության վորակի լա-վացման ու մոտիկ ժամանակամիջոցում հանրապետական, տեղա-կան և կոոպերատիվային արդյունաբերության ղեկավարման մե-թոդների արմատական վերակառուցման համար:

4. Արդյունաբերական շինարարության հետագա ծավալումն ու թողարկվող արտադրանքի մեծագույն աճումը բոլոր անհրա-ժեշտ պայմաններով ապահովելու նպատակով, համագումարը հանձնարարում է կառավարությանը մոտակա տարիների ընթաց-քում ապահովել հետևյալ անհրաժեշտ աշխատանքները:

ա) Ունեցած հարուստ հումքային պաշարների օգտագոր-ծելու հիման վրա ավարտել նախագծումն ու սկսել կառուցել մե-տալուրգիական, ազոտա-տուկային և ալյումինի կոմբինատներ և սինթետիկ կաուչուկի գործարանը, ավարտել և շահագործ-ման մեջ մտցնել տակառագործային սառնոկաշինության գործա-րանը, տեղական հանքային հումութի և նավթային արդյունաբե-րության մնացորդների բազայի վրա արագորեն ծավալել հանրա-պետական նշանակություն ունեցող մի շարք քիմիական ձեռնարկ-ների կառուցումը, կարճ ժամանակամիջոցում ավարտել ցեմեն-տի արդյունաբերության վերակառուցումը, ուժեղացնել տեղա-կան շինանյութեր թողարկող մեքենայացրած ձեռնարկություննե-րի կառուցումը: Վերացնել յերկրաբանական–հետախուզական աշ-խատանքներում հետ մնալը և ձեռնարկել հետախուզած տեղերի պլանների արդյունաբերական մշակման:

բ) Մոտակա տարիներում թեթև արդյունաբերության գո-յություն ունեցող ձեռնարկների աշխատանքների բարելավման հետ միասին, հատուկ ուշադրություն դարձնել տեքստիլ (մա-նածագործա–գործվածքային ֆաբրիկայի կառուցում), մետաքսի (կենտրոնացնել Օրդուբադի և Խինդրիստանի մետաքսագործա-կան գործարանները, Նուխայի կոմբինատում ավարտել արտադրա-կան լիակատար ցիկլը (շրջանը), տրիկոտաժի կոմբինատի լրիվ գործարկելը), բամբակազտիչ և ապակու արդյունաբերու-թյան հետագա զարգացումը:

գ) Ավարտել ձկնարդյունաբերության վերակառուցումը, հա-տուկ ուշադրություն դարձնելով մեքենայացման աշխատանքների

վրա, արժեքավոր ցեղերի արհեստական ձկնաբուծությանը, մոտորային նավատորմիղի մեծացմանը և ակտիվ վորսի ընդլայնմանը:

գ) Կոնկրետ միջոցառումներ մշակել ուղղված սննդա—համային, մասնավորապես, կոնսերվային արդյունաբերության հետագա զարգացման համար, տեղական հումուքային պաշարների ամեն կերպ ոգտագործելու բազայի վրա, նույնպես և աղի արդյունաբերությունը՝ Անդրկովկասի աղի պահանջները լրիվին ապահովելու նպատակով:

դ) Ապահովել արմատական բեկում ծառագործկոմբինատների և քաղխորհուրդների վերաբերմամբ տեղի արդյունաբերության հարցերը, լայն ծավալել տեղերի նախաձեռնությունը մի շարք ձեռնարկների կառուցման համար տեղական հումուքի վրա, վորը դեռևս բավարար չափով չի ուսումնասիրված և թույլ է ներգրավված արդյունաբերական շահագործման մեջ:

Ուժեղացնել տորֆի արդյունաբերության վերաբերմամբ Տեղական արդյունաբերության ժողկոմատի կողմից պլանային և տեխնիկական ղեկավարությունը, առանձնապես նախագծման, հիմնական կառուցումների վրա հսկողության, ձեռնարկների նորմալ շահագործումը կազմակերպելու համար և վերջիններս շրջաններում ապահովելու ինժեներա — տեխնիկական կադրերով:

Համագումարը հանձնարարում է կառավարությանը հատկապես զբաղվել գյուղատնտեսական ալրաղացների հարցով և գործնական միջոցներ ձեռք առնել քանդված ալրաղացները վերականգնելու և հանրապետության ջրաղացային տնտեսությունը վերականգնելու համար:

Դրա հետ միասին, Համագումարն անհրաժեշտ է համարում ընդլայնել և բարելավել զբաղմունքային կոոպերացիայի կողմից արտադրվող լայն սպառման ապրանքները՝ տեղական տեսակի հումուքի, ավլունքի և պետարդյունաբերության մնացորդների վրա, հատուկ ուշադրություն դարձնելով գործերի արտադրության հետագա ընդլայնման և բարելավման վրա:

## ՏՐԱՆՍՊՈՐՏ ՅԵՎ ԿԱՊ

1. Հանրապետության ճանապարհային տնտեսության մեջ արմատական բեկում ապահովելու նպատակով, Համագումարը առաջարկում է ԽՍՀՄ կառավարությանը, յերկրորդ հնգամյակի վերջում հիմնականում անճանապարհությունը վերացնելու վերաբերմամբ 17-րդ կուսհամագումարի վորոշման համապատասխան, վճռական միջոցներ ձեռք առնել գոյություն ունեցող



ճանապարհային ցանցը վերակառուցելու և նոր ճանապարհներ կառուցելու համար, առանձնապես բամբակային և մերձարևադարձային ռայոններում, ճանապարհային շինարարության մեջ մեծագույն չափով ներգրավելով գյուղական ազգաբնակչության աշխատանքային մասնակցության հիմունքներով:

2. Մատնանշել, վոր չնայած Անդրկովկասյան յերկաթուղու Ադրբեջանյան տեղամասի աշխատանքի բարելավմանը, վորը ձեռք է բերված 1934 թ. Համկոմկուսի (բ) Կենտկոմի հունիսյան վորոշման իրագործման հիման վրա (փոխադրումների պլանների կատարումը, հիվանդ շոգեքարշերի տոկոսը մինչև վորոշած նորմային հասցնելը, շարժական կազմի նորոգման բարելավումը և այլն), այնուամենայնիվ բավականաչափ թերություններ կան (գուգորդված (սպարենայա) յերթևեկությունը դեռևս լրիվին չի իրականացված և կազմում է միայն 83,5 տոկոսը, բավականին շատ է բանուժի հոսունությունը, ցածր է աշխատանքային կարգապահությունը, չեն վերացված վագոնների անարտադրական պարապուրդները, գնացքների ուշացումները և այլն), Համագումարը հանձնարարում է կառավարությանը, վճռական պայքար մղել յերկաթուղու վորակական ցուցանիշների հետագա բարելավման համար և ապահովել նրա բացթողնելու (պրոպուսկնոյ) ընդունակության լրիվին ոգտագործումը:

3. Խոշոր ժողովրդա-տնտեսական նշանակություն տալով Ջուլֆա — Բաքու յերկաթուղուն, Համագումարը պարտավորեցնում է կառավարությանը՝ բոլոր միջոցները ձեռք առնել մոտակա տարիներում Ջուլֆա—Բաքու յերկաթուղու կառուցումը վերջնականապես ավարտելու համար:

4. Նշելով ծովային տրանսպորտի արմատական վերակառուցումը, վորն ապահովում է ծովային աճող փոխադրումների — ինչպես նավթի, այնպես էլ չոր ապրանքների — կատարումն ու գերակատարումը, Համագումարն անհրաժեշտ է գտնում, 1935 թվի փոխադրումների—12·904 տոնն նավթ և 1·251 հազար տոնն չոր ապրանքներ — այնպես էլ ծովային տրանսպորտի հետագա խնդիրների ապահովումը, իրագործել նավանորոգման բազայի ընդլայնելու միջոցառումները, գոյություն ունեցող նավանորոգման գործարանների վերակառուցմամբ և սարքավորումների ուժեղացմամբ ու նոր նավակայանների կառուցումով, ավարտելով Ապշերոնի նավակայանի և Բաքվի № 1 Պիրսի մատնանշված աշխատանքները, մեծացնելով ոժանդակ նավատորմիղը, նոր նավամատույցների կառուցումն ԱՍԽՀ հողամասում (Լենքորան, Աստարա և մյուսները), անհրաժեշտ ուժեղացում և մեծացումն ապրանքատար, նույնպես և մարդատար նավատորմի:

5. Հաշվի առնելով Քուռի նավագնացության խոշոր դերը, ինչպես հիմնական բամբակային մասիվների սպասարկման, այնպես էլ խորքերից բեռների և ճամփորդների տեղափոխման գործում, Համագումարը հանձնարարում է կառավարությանը միջոցներ ձեռք առնել Քուռի նավագնացության աշխատանքներն ուժեղացնելու համար:

6. Մատնանշելով կապի վորոշ նվաճումներ, համագումարը նշում է, վոր կապն, այնուամենայնիվ ԱՍԽՀ ժողովրդական տնտեսության մեջ մնում է հետամնաց ճյուղը և դրա համար առաջարկում է կառավարությանը հատուկ ուշադրություն դարձնել կապի աշխատանքների հետագա բարելավման համար:

## ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Հաշվի առնելով բամբակագործության բնագավառում վերջին յերկու տարում, և առանձնապես անցյալ՝ 1934 թվին ունեցած նվաճումները, համագումարը մատնանշում է, վոր Ադրբեջանում գոյություն ունեն բոլոր հնարավորությունները՝ բամբակի բերքատվությունն էլ ավելի բարձրացնելու համար, յեգիպտական բամբակենու հրապարակները հետագայում ընդարձակելու, նույնպես և, փորձի կարգով, լայն տնտեսական պայմաններում «Սի-Այլենդ» թանկարժեք տեսակի բամբակի մշակելու համար:

1934 թ. ձեռք բերած բամբակաբուծության ընդհանուր հաջողությունների հետ միասին, համագումարը մատնանշում է բամբակային խորհտնտեսությունների մեխանիզացիայի անբավարար աշխատանքը, վորոնք չկարողացան ընկ. ընկ. Ստալինի և Մոլոտովի՝ «Բամբակային խորհտնտեսությունները բամբակային գործի առաջավոր տեխնիկայի իսկական օրինակներ դարձնելու մասին» ցուցմունքները բոլշևիկորեն իրականացնել:

Ցանելով 1935 թվին էլ ավելի մեծ քանակությամբ՝ քան 1934 թ. հնդավոր բամբակ ստանալու անհրաժեշտությունից, համագումարը հանձնարարում է կառավարությանը, ամենուրեք ցանքաշրջանություն մտցնելու և կոլտնտեսություններում էլ ավելի լայն կերպով նորագույն ագրոտեխնիկայի արմատացման հիման վրա, գյուղական տնտեսության հետագա մեքենայացման հիման վրա ապահովել բամբակենու բերքատվության հետագա բարձրացումը, իսկ բամբակային խորհտնտեսությունների վերակառուցմամբ մշակել կոնկրետ միջոցառումներ՝ Ադրհողժողկոմի և նրա սիստեմի աշխատանքների լավացման համար:



2. Համագումարը գտնում է, վոր ԱՍԽՀ գյուղական տնտեսության կարևոր ճյուղերից մեկը—անասնապահությունը, չնայած 1934 թ. ունեցած վորոշ բեկմանը, դեռևս հանդիսանում է ամենահետամնաց տեղամասը և հանձնարարում է կառավարությանը, լայն զոո-վետերինարական միջոցառումների ընդլայնելու, կերային բազան լավացնելու և զարգացնելու ու հետագա կազմակերպչա-տնտեսական ու քաղաքական ամրապնդման միջոցով՝ ապահովել անասնաբուծական խորհտնտեսությունների և կոլտնտեսային ապրանքային ֆերմաների անասնաբուծության վերելքը հանրապետությունում և մասնավորապես ապահովել ԱՍԽՀ տնտեսությունների բոլոր տեսակի գլխաքանակի 1935 թ. պետական պլանի լրիվին իրագործումը:

3. Մատնանշելով Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի պատմական վորոշումից հետո հացահատիկային տնտեսության զարգացման սուր շրջադարձը հանրապետությունում, համագումարն այնուամենայնիվ համարում է, վոր հացահատիկային տնտեսությունը գտնվում է ցածր ագրո-տեխնիկական մակարդակի վրա և Ադրբեջանում այդ բնագավառում գոյություն ունեցող հարուստ հնարավորությունները չեն օգտագործվում:

Համագումարն առանձնահերթ խնդիրներից մեկն է համարում հացահատիկային կուլտուրաների հետագա զարգացումն ու բերքատվության բարձրացումը՝ առաջավոր ագրոտեխնիկայի արմատացնելու (չարքացան, սերմերի ազնվացում, քաղհան և այլն) և արտադրության հիմնական պրոցեսների լայն մեքենայացման բազայի վրա:

Հիմնականում թողնելով չալթուկի կայուն տարածությունների չափը մոտակա ժամանակվա համար, հանձնարարել կառավարությանը հետագայում գլխավոր ուշադրությունը դարձնել բերքատվության սուր կերպով բարձրացնելու և մեքենայացման յենթակա բոլոր պրոցեսները մեքենայացնելու վրա:

4. Հաշվի առնելով խոնավ մերձարևադարձային կուլտուրաների (թեյ, ցիտրուսային և ուրիշ.) աճեցնելու փորձերի դրական հետևանքները Աստարա-Լենքորանի մասիվում, նույնպես և մի շարք շրջաններում (Ապշերոն, Գյոգչայ, Աղդաշ և ուրիշ.) չոր մերձարևադարձային կուլտուրաներով մեծ հրապարակները (զաֆրան, թուզ, նուռ և այլն), համագումարը կառավարության առաջ խնդիր է դնում Ադրբեջանը դարձնել Խորհրդային Միության յերկրորդ մերձարևադարձային բազա:

5. Կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների բարեկեցության բարձրացման և արդյունաբերական կենտրոնների

ու խորհտնտեսությունների բանվորների մատակարարման բարելավման նպատակով, համագումարն անհրաժեշտ է գտնում ամեն կերպ զարգացնել բանջարաբուծությունը, և մասնավորապես կարտոֆիլաբուծությունը և ուշադրությունը կենտրոնացնել հին մրգախաղողային տունկերի վերանորոգման և վերակառուցման և նոր այգիներ ու խաղողաքարեր գցելու վրա՝ ինչպես ապրանքային այգեգործության, նույնպես և հանրապետության մյուս ռայոններում (Մուղան, Միլ և ուրիշ.):

6. Մատնանշելով չերամաբուծության խիստ հետ մնալը, համագումարն անհրաժեշտ է համարում իրականացնել միջոցառումներ, վորոնք կապահովեն ամենուրեք չերամաբուծության կերային բազայի ընդարձակումը (թթենու տունկեր), սերմի վորակի բարձրացումը և մետաքսային տնտեսության մեջ չերամաբուծության ագրո – կուլտուրայի ղեկավարման մեթոդների արմատացումը:

7. Ջրային տնտեսությունը, վորը Ադրբեջանի պայմաններում, առանձնապես բամբակային ռայոններում, հանդիսանում է վճռական գործոն գյուղական տնտեսության զարգացման համար, շարունակում է ամենանեղ տեղը մնալ: Գրեթե բոլոր վոռոգելի ռայոններում, հակառակ կուսակցության և կառավարության մի շարք կոնկրետ ցուցմունքների շարունակում են տեղի ունենալ ջրաոգտագործման կանոնների խախտման փաստեր, վորոնք բերքին ահագին վնասներ են հասցնում, հողն աղոտացնում ու ճահճացնում, և իրենց հերթին մալարիայի նոր ոջախներ են ստեղծում:

Ջրային տնտեսության թերագնահատումը անթույլատրելի համարելով, համագումարը հանձնարարում է կառավարությանը, ինժեներական և տեղական սիստեմների վերակառուցման, մեքենայական վոռոգման, Մուղանում մեքենաների ելեկտրոֆիկացիայի յենթարկելու և քյահրիզային տնտեսության զարգացնելու հետ միասին, անխնա պայքար մղել վոռոգելի ջրի վերաբերմամբ գիշատիչ վերաբերմունքի և ջրային սիստեմների ու սարքավորումների շահագործման մեջ անկանոն վերաբերմունքի դեմ:

Համագումարը գտնում է, վոր կոլտնտեսությունների հետագա կազմակերպչա – տնտեսական և քաղաքական ամրապնդման և դրա հիման վրա «բոլոր կոլտնտեսությունները բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին ունևոր դարձնելու» (Ստալին) համար մղվող պայքարի հիմնական խնդիրն է հանդիսանում խորհրդային կազմակերպությունների, ինչպես կենտրոնում, նույնպես և տեղերում ամեն մի աշխատավորից ու կոլտնտեսա-



Կ 3118-65

կանից պահանջում է անմիջապես նախապատրաստական աշխատանքներ ծավալել 1935 թ. գարնան համար և ուժեղացնել դասակարգային զգոնությունը և անխնա պայքարը՝ ջախջախված կուլակության և նրա գործակալության դեմ:

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Բանվորների, կոլտնտեսականների ու աշխատավոր մասսաների նյութական դրության հետագա բարելավման, նույնպես և խորհրդային կուլտուրական առևտուրը զարգացնելու նպատակով, խորհուրդների 8-րդ համագումարը հանձնարարում է կառավարությանը կոնկրետ միջոցառումներ նշել ապրանքատար ցանցի աշխատանքների հետագա բարելավման համար, ապահովելով արագ կերպով ապրանքն արտադրությունից սպառողին հասցնելը, ապրանքային ցանցի կանոնավոր զետեղումը ապրանքաշրջանառության վճռական տեղամասերում — գյուղսպառկոոպ, խանութներ, ռայմիություն, — կադրերի կանոնավոր դասավորումը, առևտրում յեղած ավելորդ ծախքերի, առանձնապես ադմինիստրատիվ – գրասենյակային և տրանսպորտի ծախսերի կրճատումը և կոլտնտեսային առևտրի ուժեղացումը:

Պարտավորեցնել բոլոր առևտրական կազմակերպություններին ու արդյունաբերական ձեռնարկներին լայն պայքար ծավալել ապրանքային միջոցների ավելացնելու և արտադրվող ապրանքների և նրա ասորտիմենտի վորակի բարելավման համար, ապահովել առևտրական ձեռնարկների յեկամուտը, ընդ վորին խիստ պահպանել գների խորհրդային քաղաքականությունը, ԽՍՀՄ Ժողկոմխորհի և Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշման հիման վրա անխնա պայքար կազմակերպել թերակշռման և թերաչափման դեմ, նույնպես և վատնումների ու հափշտակումների դեմ:

## ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

Մատնանշելով անցած 4 տարվա ընթացքում ֆինանսական տնտեսության բարեկարգ աճումը, վորի զարգացումը արտացոլում է ժողովրդական տնտեսության աճումն ամբողջովին և ԱՍԽՀ աշխատավորության նյութական բարեկեցության բարձրացման մեջ, խորհուրդների համագումարը հանձնարարում է կառավարությանը՝ ուժեղացնել և ապահովել խիստ ֆինանսային և բյուջետային դիսցիպլինայի պահպանումը, ուժեղացնել [illegible]ցությունը յեկամուտները գանձելու և միջոցները կանոնավոր



ГОС Библиотека
Туркменская государственная библиотека

ծախսելու վրա, մասնավորապես ապահովել գյուղական վերաստուգիչ հանձնաժողովների և ֆինանսական ստորին ակտիվի ակտիվ աշխատանքը:

Բյուջեների կազմելու ժամանակ, ապահովել իր ժամանակին չհաստատված բյուջեների կազմելը և ամրապնդել ստորին բյուջեները, նույնպես և ապահովել գյուղխորհուրդների ինքնուրույնությունը՝ իրենց բյուջեների իրացման գործում:

## ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Չնայած բնակարանա-կոմունալ տնտեսության բնագավառում ձեռք բերած նվաճումներին, այնուամենայնիվ վերջինս հետ է մնում ժողովրդական ամբողջ տնտեսության հսկայական աճից և աշխատավորության աճող պահանջներից:

Համագումարը հանձնարարում է կառավարությանը հենց մոտակա տարիներում վերացնել այդ հետամնացությունը, դրա հետ միասին հատուկ ուշադրություն դարձնել բնակարանային նոր շինարարության ծավալման վրա, նույնպես և գոյություն ունեցող բնակելի ֆոնդերի վերականգնման վրա: Ազգաբնակչությանը լավորակ խմելու ջրով ապահովելու նպատակով, նույնպես և որտորե բուռն կերպով զարգացող արդյունաբերական ձեռնարկների պահանջների բավարարելու համար լայն ծավալել ջրմուղների կառուցումները, առանձնապես արդյունաբերական կենտրոններում, մասնավորապես ծավալել Բաքվի յերկրորդ ջրմուղի կառուցումն այն հաշվով, վորպեսզի նա ավարտվի 1938 թվին. ապահովել Գյանջայի ջրմուղի առաջին հերթի գործարկումը 1936 թվին, դրա հետ միասին հետազոտիչ աշխատանքներ տանել հարթավայրի բամբակային ռայոններում և ձեռնարկել գործնականորեն խմելու ջրի պրոբլեմը լուծել կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում և այլն: Լուրջ ուշադրություն դարձնել խոշոր արդյունաբերական և ռայոնական կենտրոնների բարեշինության վրա, այդպիսիներում լայն ծավալել պլանավորման աշխատանքները, կուլտուրայի ու հանգստի պարկերի, հասարակական պարտեզների շինարարությունը:

Համագումարը հանձնարարում է կառավարությանը գործնական միջոցառումներ մշակել՝ կոլտնտեսություններին, խորհտնտեսություններին և կոլտնտեսականներին օգնություն ցույց



տալու՝ Մուղանի և Ադրբեջանի տափաստանային շրջանների կանաչապատելու համար:

2. Հավանություն տալով Խորհուրդների Պալատի կառուցման միջոցառումներին, համագումարը հանձնարարում է կառավարությանը՝ արագացնել շինարարությունն այնպիսի հաշվով, վորպեսզի այն ավարտվի մոտակա տարիներում:

3. Խորհուրդների համագումարը մատնանշում է, վոր Լենին-Ստալինի ազգային քաղաքականության անշեղ կիրառման համար մղվող պայքարի հետևանքով, բանվոր դասակարգը, կոլտնտեսականներն, Ադրբեջանի ամբողջ աշխատավորությունը ձեռք են բերել ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի հետագա վերելքն ու ծաղկումը, 16-րդ կուսհամագումարի և Համկոմկուսի (բ) Կենտկոմի դիրեկտիվն ընդհանուր ուսումն ավարտել տարրական դպրոցի ծավալով՝ հիմնականում կատարված է: Ընդհանուր տարրական պարտադիր ուսուցումը տարվում է 14 ազգությունների մայրենի լեզվով:

Ազգաբնակության գրագիտությունը բարձրացել է մինչև 78,7 տոկոս: Կուլտուրայի պալատների, թատրոնների, ակումբների, գրադարանների, խրճիթ-ընթերցարանների, կինոյի, ռադիոյի, լրագիրների և բազմատիրաժների աճող ցանցի միջոցով ուժեղացված է մասսայական քաղաքական-լուսավորչական աշխատանքը և աշխատավորների գեղարվեստական սպասարկումը:

Համագումարը հանձնարարում է կառավարությանը միջոցներ ձեռք առնել, ընդհանուր տարրական պարտադիր ուսման լրիվին իրականացումն ապահովելու համար, միջոցառումներ նշել յերկրորդ հնգամյակի վերջում իրականացնելու ընդհանուր պարտադիր պոլիտեխնիկական ուսումն՝ վոչ լրիվ միջին դպրոցի ծավալով վոչ միայն քաղաքում, այլև գյուղում, իրականացնել միջոցառումները դպրոցական աշխատանքի վորակական ցուցանիշները բարձրացնելու համար՝ համաձայն Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշման՝ դպրոցի մասին, մասնավորապես ուժեղացնել աշխատանքն ուսուցչության գաղափարական-քաղաքական և ընդհանուր կրթական վորակավորումը բարձրացնելու համար, բարելավել դպրոցի պոլիտեխնիկացման նյութական բազան, բոլոր կոլտնտեսականների ու բոլոր աշխատավորության ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկել դպրոցական շինարարության շուրջը և 1935 թվին ավարտել բոլոր փոխանցվող դպրոցների շինարարությունը:

Անգրագիտության և կիսագրագիտության վերացման բնագավառում, համագումարը հանձնարարում է կառավարությանը

նչել և իրագործել միջոցառումները, 1935 թվին ամբողջ ազգաբնակության մինչև 50 տարեկան հասակ ունեցողների անգրագիտության վերացումն ավարտելու համար ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում:

4. Հավանություն տալով կառավարության միջոցառումներին Բաքվում բուսաբանական այգու, կենդանաբանական պարկի և ակվարիումի կառուցման համար, համագումարը հանձնարարում է կառավարությանը շարունակել կառուցումն այնպես, որպեսզի նրանք ավարտվեն մոտական տարիներում:

5. Համագումարը մատնանշում է առողջապահական բնագավառում ձեռք բերված բավականաչափ նվաճումները. — բժշկա-պրոֆիլակտիկ և սանիտարական հիմնարկությունների ցանցի մեծացումը, մանկամսուրների աճումը, առանձին տեսակի ստացիոնար և ամբուլատորային օգնության մասնագիտացումը, արդյունաբերական և գյուղական տնտեսության վճռական տեղամասերի առավելագույն և չերտավորված սպասարկումը, համաճարակային, առանձնապես մալարիայի դեմ պայքարի ուժեղացումը:

Համագումարը գտնում է, որ խորհրդային բժշկականության հետագա զարգացումը ԱՍԽՀ, պետք է ուղղված լինի առողջապահական օրգանների աշխատանքի որակի բարելավման ու աշխատանքի ու կենցաղի առողջացման, սանիտարական կուլտուրայի, հիվանդությունների ու մահացության պակասեցման և աշխատունակության բժշկական սպասարկման բարելավման համար տարվող հետագա պայքարի կողմը:

Պայքարը մալարիայի դեմ մնում է առողջապահության օրգանների ուշադրության կենտրոնում: Այդ բնագավառում հերթական խնդիր է հանդիսանում՝ աշխատավորության լայն մասսաների մոբիլիզացիան և հիդրո-տեխնիկական հակամալարիական աշխատանքների տանումը: Համագումարն առանձնապես հանձնարարում է կառավարությանը, միջոցառումներ մշակել, որոնք ուղղված պետք լինեն Ադրբեջանում մալարիայի և տրախոմայի դեմ տարվող պայքարն արագացնելու համար:

Համագումարը հանձնարարում է կառավարությանն արագացնել կուրորտային վայրերի հետագա հետախուզության աշխատանքները և անմիջապես օգտագործել ձեռք բերված կուրորտներն աշխատավորների կարիքների համար:

Համագումարը հավանություն է տալիս կառավարության որոշմանը՝ Շուշին կուրորտա-սանատորային կենտրոն դարձնելու՝ ինչպես Ադրբեջանի բանվորների, նույնպես և կոլտնտեսականների սպասարկելու համար, — նախապատրաստական աշխատանքներն սկսելով 1935 թվին:



# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԸ

1. Խորհուրդների համագումարը մատնանշում է, որ կառավարության կողմից մեծ աշխատանք է տարված խորհրդային ապարատի կազմակերպչական վերակառուցման համար՝ համապատասխան՝ սոցիալիստական շինարարության խնդիրների: Աշխատանքի ղեկավարման ֆունկցիոնալ սիստեմը հիմնականում վերացված է, ուժեղացրած է ղեկավարների անձնական պատասխանատվությունը՝ նրանց հանձնարարած ճյուղի ղեկավարման համար, ուժեղացված է կոնկրետ օպերատիվ ղեկավարությունը և կառավարության որոշումների ու կարգադրությունների կատարման ամենօրյա ստուգումը:

Համագումարը հանձնարարում է կառավարությանը շարունակել պայքարը դիմազրկության, ֆունկցիոնալկայի և բյուրոկրատիզմի դեմ, որոնք դեռ շարունակում են տեղ գտնել խորհրդային ապարատի առանձին օղակներում:

Համապատասխան 17-րդ կուսհամագումարի որոշումների, սկսած կենտրոնական կազմակերպություններից և վերջացնելով ռայոնական կազմակերպությունները, ամեն կերպ պետք է ուժեղացնեն հսկողությունն ու կառավարական որոշումների կատարման համար:

2. Խորհուրդների համագումարը մատնանշում է, որ Ադրբեջանի խորհուրդները բավականաչափ ամրապնդվել են և իրենց մեծամասնությամբ դարձել են իսկական տնտեսական – քաղաքական կենտրոններ, որոնք բոլշևիկորեն կազմակերպում ու անց են կացնում կարևոր տնտեսական – քաղաքական կամպանիաները:

Դրա հետ միասին համագումարը նշում է, որ մի շարք ռայոններում խորհուրդներն անհրաժեշտ ուշադրություն չեն դարձնում սեկցիաների ու պատվիրակային խմբակների կազմակերպմանը. համագումարը պարտավորեցնում է Ադրբեջանի խորհուրդներին, ապահովել սեկցիաների ու պատգամավորական խմբակների ծավալումը, որպես մասսաներին խորհուրդների աշխատանքում ներգրավելու հիմնական ձև և ամրապնդել կին-պատվիրակներին խորհուրդների աշխատանքում և ուժեղացնել իրենց աշխատանքները կոլտնտեսությունների կազմակերպչա – տնտեսական ամրապնդման համար:

Պայքարը խորհուրդների—պրոլետարիատի դիկտատուրայի օրգանների — ուժեղացման համար պետք է ուշադրության կենտրոնում լինի:

3. Համագումարը գտնում է, որ դատարանի և դատախա-

դության օրգանների կարևոր խնդիրները ժամանակակից էտապում հանդիսանում են սոցիալիստական սեփականության — խորհրդային կարգերի հիմքի — պաշտպանությունը և հեղափոխական օրինականության ամրապնդումը՝ աշխատանքի բոլոր բնագավառներում:

Դրա հետ միաժամանակ պայքար արտադրանքի վորակի, խորհրդային կուլտուրական առևտրի լայն ծավալման համար և ի դեմ սպեկուլյացիայի—այդ աշխատանքը պետք է արդարադատության օրգանների ուշադրության կենտրոնում լինի:

Համագումարը հանձնարարում է կառավարությանը դատարանի և դատախազության օրգանների վճռականորեն և սիստեմատիկորեն ամրապնդել լավագույն ու ստուգված կադրերով:

4. Համագումարը հատուկ գոհունակությամբ է նշում փառապանծ Բանվորա — Գյուղացիական Կարմիր Բանակի—աշխատավորների սոցիալիստական հայրենիքի արթուն պահակի և պաշտպանի հզորության անշեղ աճումը:

Նրանց պաշտպանության տակ խորհուրդների յերկրին սարսափելի չեն արտասահմանյան ինտերվենտների վոչ մի նենգությունները և մեր խաղաղ սոցիալիստական շինարարությունը խանգարելու առաջին իսկ փորձը ջախջախիչ հակահարված կստանա:

Համագումարը հանձնարարում է կառավարությանը և առաջիկայում վոչ մի րոպե չթուլացնել հոգածությունը՝ յերկրի պաշտպանունակությունն ամրապնդելու համար, ստեղծելով ամբողջ աշխատավորության կողմից սիրված Բանվորա — Գյուղացիական Կարմիր բանակի մարտիկների համար բոլոր անհրաժեշտ պայմանները՝ նրանց մարտունակությունը բարձրացնելու ամենօրյա աշխատանքի համար:

Խորհուրդների 8-րդ համադրբեջանյան համագումարը կոչ է անում Նավթային Բաքվի ու Ադրբեջանի բամբակային դաշտերի բոլոր հարվածայիններին, հանրապետության բոլոր պրոլետարներին և կոլտնտեսականներին մոբիլիզացիայի յենթարկել իրենց բոլոր ուժերն ու յեռանդը՝ պրոլետարական դիկտատուրայի օրգաններն ել ավելի ամրապնդելու համար, վճռականապես հաղթելու դասակարգային թշնամուն ու նրա գործակալության դիմադրությունը և 1935 թվի նավթի ու բամբակի պլանները կատարելու և գերակատարելու, Խորհրդային Ադրբեջանը Խորհրդային Միության առաջավոր ու օրինակելի հանրապետություն դարձնելու համար:

Խորհուրդների համադրբեջանյան 8-րդ համագումարը հաստատ համոզմունք է հայտնում, վոր Խորհրդային Ադրբեջանի աշխատավորությունն Անդրկովկասի ու Խորհրդային Միության ժողովուրդների հետ յեղբայրական դաշինքով, փառապանծ կոմունիստական կուսակցության և մեծ Ստալինի ղեկավարությամբ և ապագայում էլ բարձր բռնած Լենին—Ստալինի մեծագույն դրոշակը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշակը, ցույց կտան պայքարի մեծագույն օրինակներ և ԽՍՀՄ յերկրորդ հնգամյակում անդասակարգ, սոցիալիստական հասարակության կառուցման մարտիկների առաջին շարքերում կգնան:

## 2. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Խորհուրդների համաադրբեջանյան 8-րդ համագումարը մատնանշում է, վոր Լենինյան-Ստալինյան ազգային քաղաքականության անշեղ կիրառման հետևանքով, Ադրբեջանի բանվոր դասակարգը, կոլտնտեսականներն ու աշխատավորները, տնտեսական-քաղաքական խոշոր հաղթանակների—առանձնապես նավթի, բամբակի ու գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիման վրա, Համկոմկուսի (բ) Անդրերկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավարությամբ ձեռք բերին ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի հետագա վերելքն ու զարգացումը:

Խորհուրդների համաադրբեջանյան 7-րդ համագումարի վորոշումները՝ տարրական դպրոցի ծավալով ընդհանուր պարտադիր ուսման մասին, վորն ընդունված է 16-րդ կուսհամագումարի դիրեկտիվի և համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ մեծ Ստալինի ցուցմունքների համաձայն — հիմնականում իրագործված է:

7-րդ և 8-րդ համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում տարրական դպրոցների աշակերտների թիվը 1930–31 ուսումնական տարվա 242.212-ից աճել է 383.470-ի 1933–34 ուսումնական տարում, աղջիկների թիվը համեմատաբար 82,240 հոգուց բարձրացել է մինչև 159,843-ի, դրանց թվում թրքուհիների թիվը 1930–31 ուս. տարվա 42,182-ից հասել է 99,242 հոգի:

Նախապատրաստվում է բազա ընդհանուր ուսման համար՝ ոչ-լրիվ-միջին դպրոցի (յոթնամյակ) ծավալով, վորն արդեն



իրագործվում է Բաքվում, Կիրովաբադում և մի շարք ուրիշ քաղաքներում:

Ձեռնարկված է միջակ (տասնամյա) դպրոցների կազմակերպման գործը:

Համագումարը հատուկ նշում է ԱՍԽՀ 14 ազգությունների մայրենի լեզուներով ընդհանուր պարտադիր ուսման ծավալման հաջողությունները: Խորհուրդների համաադրբեջանյան 7-րդ համագումարի վորոշումը՝ քրդերի համար մայրենի լեզվով դպրոցներ կազմակերպելու մասին — իրագործված է: Վորոշ բեկում է առաջացած Համկոմկուսի (բ) 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշման իրագործման գործում, տեխնիկումների և բարձրագույն դպրոցների համար լրիվին գրագետ, գիտությունների հիմնականում լավ տիրապետող մարդիկ պատրաստելու համար, մտցված են կայուն ծրագրեր և դասագրքեր, աշխատանք է ծավալվում ԱՍԽՀ ազգային փոքրամասնությունների դպրոցների համար դասագրքեր հրատարակելու համար, կազմակերպված է վորինակելի դպրոցների ցանցը, բարձրացված է դպրոցական կարգապահությունը: Դպրոցները լրացվում են վորակյալ մանկավարժական կադրերով: Բարելավված է ուսուցիչների նախապատրաստման և վերապատրաստման գործը: Ջախջախված են աջ և «ձախ» թեքումները՝ խորհրդային պոլիտեխնիկ դպրոցների կառուցման հարցերում: Բարելավված է ուսուցչին՝ իր ամենօրյա աշխատանքում մեթոդիկ օգնություն ցույց տալու գործը: Բավականաչափ ընդլայնված է բանվորների ու կոլտնտեսականների երեխաների նախադպրոցական դաստիարակությունը: Ազգաբնակչության գրագիտությունը բարձրացել է մինչև 80 տոկոս: Կուլտուրայի պալատների, թատրոնների, ակումբների, գրադարանների, խրճիթ - ընթերցարանների, կինոների, ռադիոյի, լրագրերի և բազմատիրաժների աճող ցանցի հետ ուժեղացված է աշխատավորների մասսայական քաղ - լուսավորչական աշխատանքը և կուլտուրական սպասարկումը: Դասակարգային թշնամու և նրա գործակալության դեմ տարած կատաղի պայքարում կուսակցությունը դաստիարակել է կուլտուրական ֆրոնտի, հազարավոր գիտակից ակտիվ մարտիկներ, վորոնց յեռանդըն ուղղված է դեպի սոցիալիզմի շինարարությունը: Կուլտուրական ֆրոնտում տարած այդ հաղթանակները հնարավոր են միայն պրոլետարիատի դիկտատուրայի երկրում և Լենին - Ստալինի ազգային քաղաքականության հաստատ և անշեղ կիրառման պայմաններում:

Սակայն, չնայած այս բոլոր նվաճումներին, կուլտուրական շինարարության տեմպերը և առանձնապես վորակական ցուցա-

նիշները դեռևս չեն համապատասխանում աշխատավոր լայն մասսաների աճող պահանջներին:

Ընդհանուր պարտադիր տարրական ուսումը մի շարք ռայոններում դեռևս անբավարար է տարվում (Սալյան, Քյուրդամիր, Բարդա, Ալի – Բայրամլու, Սաբիր – Աբադ), դեռ ևս անբավարար է ծավալված քաղխորհուրդների, ռայգործկոմների, գյուղխորհուրդների և հասարակական կազմակերպությունների կողմից բանվորական և կոլտնտեսական հասարակայնությունը դեռ բավարար չափով չեն ընդգրկված ընդհանուր պարտուսի համար պայքարի գործում, և առանձնապես դպրոցի կողմից աղջիկների լրիվ ընդգրկելուն, դպրոցի նյութական բազայի ամրապնդելուն, աշակերտության ցրվելը դադարեցնելու համար:

Շատ ռայոններում իր բարձրության վրա չի դրված կրթական աշխատանքը ինչպես դպրոցում, նույնպես և դպրոցից դուրս, պայքարն ուսման որակի բարձրացման, դպրոցի պրոլետարականացման համար, դպրոցում դասակարգային խորթ գաղափարականության ներս խցկելու դեմ:

Լուսժողկոմատը, խորհուրդները և հասարակական մյուս կազմակերպությունները դեռ չեն գլխավորել՝ յերեխաներին դպրոցում լրիվին ընդգրկելու և բանվորների, կոլտնտեսականների և յերկրի բոլոր աշխատավորության կուլտուրական աճող պահանջների լրիվին բավարարելու համար տարվող պայքարը:

Լուսժողկոմատի ապարատը և նրա օրգանները տեղերում դեռևս չեն վերացրել աշխատանքի գրասենյակային–բյուրոկրատական մեթոդները, ֆունկցիոնալական և դեռևս նրանք չեն դարձել կուլտուրական հեղափոխության օպերատիվ օրգաններ:

Գոյություն ունեցող ուսուցչական կադրերի հանրակրթական որակավորման բարձրացման և մարքսիստական–լենինյան թեորիայով զինվածությունը պատրաստող ցանցը, չի ապահովում դպրոցի համար որակյալ ուսուցիչների պահանջը:

Գյուղում նախադպրոցական հիմնարկությունների ցանցի հսկայական թափի դեպքում—նրանց կրթական աշխատանքի որակական ցուցանիշները չափազանց ցածր են: Մանկական անխնամության դեմ տարվող պայքարն անբավարար է:

Անգրագիտության վերացումը, առանձնապես թրքուհիների և ազգային փոքրամասնության կանանց մեջ—գյուղում անբավարար է տարվում: Քաղլուսհիմնարկների աշխատանքները չեն բավարարում կոլտնտեսական մասսաների աճող քաղաքական և կուլտուրական պահանջները, իսկ մի շարք ռայոններում (Գյոգչայ, Քյուրդամիր, Կախ, Թաուզ և մյուսն.) գոյություն ունեն քաղլուսհիմնարկությունների ուղղակի թերագնահատում. ակումբնե-



րը, գրադարանները, խրճիթ–ընթերցարանները չեն նորոգվում, չեն սարքավորվում, քաղլուսհիմնարկների համար աշխատողների կադրերի ընտրությանը հատուկ ուշադրություն չի դարձնում:

Ռայոնների նշանակելի մասում տեղի յե ունենում լուսավորության կարիքների համար բյուջետային հատկացումների ոչ իրենց նշանակությամբ ծախսումը, վորի հետևանքով առաջանում են ուսուցիչների աշխատավարձի վճարման ուշացումներ, իր ժամանակին չեն գնում դասագրքերը, դպրոցները մնում են առանց սարքավորման: Դպրոցական շինարարության տեմպերն ու որակը սուր կերպով հետ են մնում դպրոցին առաջադրած պահանջներից: Լուսժողկոմատն ու ռայգործկոմները չեն գլխավորում ու ամենուրեք անբավարար են օգտագործում դպրոցների շինարարության, նորոգման և սարքավորման գործում կոլտնտեսային մասսաների կողմից առաջ յեկած նախաձեռնությունը:

Խորհուրդների համադրբեջանյան 8-րդ համագումարը վորոշում է.

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ա) Կարճ ժամանակամիջոցում ապահովել ընդհանուր տարրական պարտադիր ուսման լրիվին իրագործումը, հատուկ ուշադրություն դարձնելով դպրոցում աղջիկների ներգրավելուն. լայն բացատրական աշխատանք տանելու հետ միասին, բարձրացնել ծնողների պատասխանատվությունը՝ յերեխաների դպրոց հաճախելու համար, անխնա պայքարելով դասակարգային թշնամու և նրա գործակալության դեմ, վորն ընդդիմադրում է ընդհանուր ուսման գործին:

բ) Համապատասխան 17-րդ կուսհամագումարի դիրեկտիվի իրագործել յերկրորդ հնգամյակի վերջում ընդհանուր պարտադիր պոլիտեխնիկական կրթություն մտցնելը՝ վոչ լրիվ միջին դպրոցի ծավալով՝ վոչ միայն քաղաքում, այլև գյուղում (դպրոցական շինարարություն, կադրերի պատրաստում, գիշերօթիկների կազմակերպում):

գ) Միջոցառումներ մշակել միջին դպրոցների արագացրած զարգացման համար, առաջին հերթին քաղաքներում և բանվորական շեներում, այնպիսի հաշվով, վորպեսզի հնգամյակի վերջում ամեն մի ռայոնում լինի միջին դպրոց:

դ) Մշակել պլան և միջոցառումներ նշել ֆիզիկական դաստի-

ություններ ունեցող երեխաների (խուլ-համրեր, կույրեր) մեջ ընդհանուր պարտադիր ուսում տանելու համար:

դ) Դպրոցի կրթական աշխատանքի և ուսման որակի բարձրացման նպատակով, համաձայն դպրոցի մասին Համկոմկուսի (բ) որոշման՝ ուժեղացնել ուսուցչության հանրակրթական վերապատրաստման և գաղափարա-քաղաքական մակերևույթի բարձրացումը, ամրապնդել դպրոցի պոլիտեխնիզացման բազան:

զ) Հատուկ ուշադրություն դարձնել կոմունիստական դաստիարակության հարցերին (ինտերնացիոնալ, հակակրոնական դաստիարակություն, սոցիալիստական վերաբերմունք դեպի աշխատանքը, առողջարար աշխատանք, երեխաների գեղարվեստական դաստիարակում և այլն), բարձրացնել ժողովրդական կրթության դպրոցների աշխատավորների, ծնողների և այն անձանց պատասխանատվությունը, որոնց դաստիարակության ներքո են գտնվում երեխաները:

ե) Բարելավել երեխաների արտադպրոցային դաստիարակման աշխատանքները, լայնացնել պիոներ-ակումբների, մանկական կինոների, մանկական տեխնիկական կայանների, գրադարանների աշխատանքները. ամեն մի ոչ-լրիվ միջին դպրոցին կից ստեղծել գրադարան՝ արտադպրոցական ընթերցանության համար: Ցերեկներն օգտագործել պրոֆմիութենական ակումբները, կուլտուրայի պալատները, կինոն՝ երեխաների արտադպրոցական դաստիարակման համար: Լայն ծավալել առողջարար և ֆիզկուլտուրային աշխատանքները:

Տարրական դպրոցները միջին, ոչ-լրիվ միջին կրթությամբ դասատուներով, իսկ միջին դպրոցները բարձրագույն կրթությամբ դասատուներով ապահովելու նպատակով՝

1. Ընդլայնել ուսուցիչների գոյություն ունեցող նախապատրաստական ուսումնական հիմնարկների ցանցը, միաժամանակ բարձրացնելով ուսուցիչների առկա կադրի որակավորումը՝ դասընթացային սիստեմի և հեռակա կրթության միջոցով.

2. Առանձնապես ուշադրություն դարձնել ուսուցիչների նախապատրաստմանը և վերապատրաստմանը՝ ազգային փոքրամասնությունների դպրոցների համար.

3. Մանկավարժական տեխնիկումների և բարձրագույն մանկավարժական ինստիտուտների սիստեմում ապահովել ռուսական և թուրքական դասատուների նախապատրաստությունը, հատուկ ուշադրություն դարձնելով դպրոցներում ռուսական լեզվի դասավանդության բարելավման վրա:

4. Ուժեղացնել մանկավարժական տեխնիկումների, մանկավարժական ռաբֆակների, բարձրագույն մանկավարժական ինստիտուտների նյութական բազան: Կարճ ժամանակամիջոցում ավարտել Նուխիում, Կիրովաբադում և Ղազախում մանկավարժական տեխնիկումների շենքերի կառուցումը:

5. 1935 թվին ձեռնարկել Ադրբեջանի պետական համալսարանի համար շենքի կառուցմանը:

6. Մատնանշելով ուսուցչության նյութական-կենցաղային պայմանների բավականաչափ բարելավումը, համագումարը հանձնարարում է կառավարությանը հետագայում էլ ապահովել ուսուցչին բոլոր անհրաժեշտ պայմանները երիտասարդ սերնդի կրթության և դաստիարակության պատասխանատու խնդիրների հաջող իրագործման համար. Մասնավորապես միջոցներ ձեռք առնել բնակարանային պայմանների բարելավման համար, բնակության տներ կառուցելով Բաքվում, Կիրովաբադում և ԱՍԽՀ մյուս խոշոր քաղաքներում, ուժեղացնել ուսուցչության կուրորտա-սանատորիային սպասարկումը, գյուղական ուսուցչության համար հողամասեր առանձնացնելով, բարելավել ուսուցչության կուլտ-սպասարկումը:

7. Ամրապնդել դպրոցի նյութական բազան, դպրոցը կահավորելով, դասական պիտույքներով, դասագրքերով մատակարարելու համար:

Ապահովել մանկական գրքերի, խաղալիքների և այլն արտադրությունը և իր ժամանակին տեղ հասցնելը: Պարտավորեցնել քաղխորհուրդներին, ռայգործկոմներին, ռայլուսբաժիններին և գյուղխորհուրդներին ամեն մի դպրոցին կից իր տնտեսությունն ստեղծելու: Բարձրացնել դպրոցների դիրեկտորների և վարիչների պատասխանատվությունը դպրոցի նյութական բազայի գրության համար, խիստ պատասխանատվության ենթարկելով անտնտեսության, այն միջոցների հափշտակման և օգտագործման համար, որոնք բաց են թողնվում դպրոցների համար և գործադրվում են ոչ ուղղակի նշանակությամբ:

8. Ուշադրության կենտրոնում դնել դպրոցական շինարարության հարցերը.

ա) 1935 թվին, առաջին հերթին ավարտել բոլոր փոխանցվող դպրոցական շինարարությունը, ապահովելով նրա շինանյութերով և դպրոցական շինարարության շուրջը մոբիլիզացիայի ենթարկել աշխատավորության լայն մասսաների նախաձեռնությունն ու միջոցները:

բ) Պարտավորեցնել տնտեսական կազմակերպությունների ղեկավարներին՝ բոլոր նորակառույցներում ապահովել դպրոցների շինարարության ավարտումը՝ հիմնարկների աշխատանքների սկզբին:

դ) Պարտավորեցնել բոլոր հիմնարկություններին և կազմակերպություններին, վորոնք գրավել են նախկին դպրոցական շենքերը, ազատել այդ շենքերը 1935 թվին՝ ըստ նշանակության օգտագործելու համար, առաջարկել Լուսժողկոմատին և ռայգործկոմներին 1935 թ. ընթացքում հաշվառման յենթարկել բռնագրաված կուլակային տները և ապահովել նրանց սարքավորումը և օգտագործումը դպրոցի համար:

ե) Միջռայոնական պլան մշակել՝ տարրական և վոչ լրիվ միջակ դպրոցների և նրանց կից գիշերօթիկ շենքերի կառուցման համար: Արագացնել դպրոցների կառուցումը Բաքվում, Կիրովաբադում և մի շարք քաղաքներում, վորտեղ շենքերի պակասությունն արգելակ է հանդիսանում ընդհանուր պարտադիր ուսման իրագործման և աշխատանքի վորակի բարձրացման համար:

## ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համագումարը հանձնարարում է կառավարությանը, բարձրացնել նախադպրոցական հիմնարկների աշխատանքի վորակը, ապահովել նրանց շենքերով, կադրերով, դասական պիտույքներով, բժշկական սպասարկմամբ, ամրացնելով սեզոնային ցանցը մշտականի: Նախադպրոցական հիմնարկությունների շենքերի կառուցման պլան մշակել, լայն օգտագործելով կոլտնտեսականների նախաձեռնությունը և բանվորների կենցաղի բարելավման ֆոնդի միջոցները (ՖՈՒԲՐ):

Պարտավորեցնել կառուցող կազմակերպություններին՝ բնակելի տներ նախագծելիս՝ նախատեսնել շենքեր՝ նախադպրոցական հիմնարկությունների համար:

Կազմակերպել մանկական կահ-կարասիների և խաղալիքների արտադրություն, կրթության հարցին նվիրված մանկական գրքի և դաստիարակության խնդիրներին նվիրված հանրամատչելի գրքույկների լայն հրատարակությունը ծավալել:

Վորակյալ դաստիարակչուհիների կադրեր ստեղծելու նպատակով՝ մանկավարժական տեխնիկումներին և բարձրագույն մանկավարժական համալսարանին կից նախադպրոցական բաժանմունք ծավալել:

Համագումարը հանձնարարում է կառավարությանը՝ կարճ ժամանակվա ընթացքում վերացնել անխնամությունը և ուժեղացնել պայքարը անհսկողության դեմ: Բարձրացնել ծնողների պատասխանատվությունը յերեխաներին փողոցային մանր /առևտրի ուղարկելու համար:



## ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԻՍԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Համագումարը հանձնարարում է կառավարությանը կարճ ժամանակամիջոցում ավարտել անգրագիտության վերացումը և յերկրորդ հնգամյակի վերջում մինչև 50 տարեկան հասակ ունեցող ամբողջ ազգաբնակության կիսագրագիտության վերացումը:

Մոտակա ժամանակամիջոցում հասակավորների ընդհանուր կրթության հիմնական ձևը համարել 8–9 ամիս և յերկամյա դպրոցներ հասակավորների համար, վորը տարրական դպրոցի ծավալով կապահովի հիմնական գիտելիքների նախապատրաստվելը:

## ՔԱՂԼՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Քաղլուսհիմնարկությունների աշխատանքների վճռական բարելավման նպատակով, համագումարն անհրաժեշտ է գտնում.

1. Վերաքննել գոյություն ունեցող ակումբների և խրճիթ-ընթերցարանների ցանցը և ապահովել նրանց համապատասխան կադրերով.

2. Կիրովաբադում, Նախիջևանում, Ստեփանակերտում, Նուխում ծավալել քաղլուսպալատներ, վորոնց նպատակը լինելու յե ղեկավարել և կազմակերպչա-մեթոդական ու նյութական օգնություն ցույց տալ մերձակա ռայոնների քաղլուսհիմնարկներին:

3. ՄՏԿ կից գոյություն ունեցող կուլտբազաները վերանափոխել ՄՏԿ գործունեության ռայոնի խրճիթ-ընթերցարանների, ակումբների, կարմիր անկյունների ղեկավարության հենակետային կենտրոնների:

Անհրաժեշտ համարել կոլտնտեսային ամեն մի բրիգադում կուլտ-կազմակերպիչի ջոկելը:

4. Համագումարն առաջարկում է ռայխորհուրդներին ամենաջալես արմատական բեկում առաջ բերել քաղլուսհիմնարկների ղեկավարության և օգնության գործում:

5. Համագումարն առաջարկում է Լուսժողկոմատին.

ա) Թոշվորների մոտ կուլտմասսայական աշխատանքները լավ կազմակերպելու և կարգի բերելու նպատակով, կազմակերպել մշտական գործող ապարատ.

բ) Միջոցառումներ մշակել ինքնագործունեության արվեստի հետագա զարգացման և ղեկավարման համար.

գ) Ընդլայնել կոլտնտեսային գյուղի և ազգային փոքրամասնության աշխատավորության գեղարվեստական սպասարկման աշխատանքը:

* * *

Համագումարը հանձնարարում է կառավարությանը մոտակա ամիսներում ամրապնդել Լուսժողկոմատը և ժողովրդական կրթության տեղական օրգանները, ամբողջովին վերակառուցելով նրանց աշխատանքները և նրանցից կուլտուրական հեղափոխության մարտական օպերատիվ օրգաններ դարձնել:

Մատնանշելով Լուսժողկոմատի և ժողովրդական կրթության օրգանների առաջ կանգնած խնդիրների կարևորությունն ու պատասխանատու լինելը, համագումարը պարտավորեցնում է բոլոր պետական հիմնարկություններին, տնտեսական և հասարակական կազմակերպություններին և կոչ է անում ամբողջ պրոլետարական հասարակայնությանը՝ ամենաակտիվ մասնակցություն ունենալ՝ երկրորդ հնգամյակում կուլտուրական հեղափոխության խոշորագույն խնդիրների լուծելու գործում:



# 3. ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Խորհուրդների համաադրբեջանյան 8-րդ համագումարը մատնանշում է, որ երկրի ինդուստրացման և գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում ունեցած խոշոր հաջողությունների հիման վրա Խորհրդային Ադրբեջանի աշխատավորությունը, խորհուրդների 7-րդ և 8-րդ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում, Համկոմկուսի (բ) Անդրերկոմի և Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի ղեկավարությամբ վճռական հաջողություններ են ձեռք բերել՝ հանրապետության անճանապարհությունը լրիվին վերացնելու համար տարվող պայքարում: Հաշվետու ժամանակաշրջանում նշանակալից աշխատանքներ են տարվել ճանապարհների վերականգնման, վերակառուցման և հիմնական վերանորոգման համար և համեմատաբար նշանակալից ծախսեր են արվել մասնավորապես բամբակային շրջաններում նոր ճանապարհներ կառուցելու համար, որի հետևանքով ավելացել են բարեկարգ հողային ճանապարհների և ամուր կեղևով ճանապարհների երկարությունը և մի շարք ճանապարհներ բանուկ դրության են բերված:

Ադրբեջանի ամբողջ ճանապարհային ցանցը 1935 թվին հասավ 10·610 կիլոմետրի (բացի Ազնեֆթի ու Բաղխորհրդի ճանապարհներից), երկու անգամ ավելանալով՝ 1928 թվի հետ համեմատած (5·304 կիլոմետր), իսկ Ադրբեջանի ավտոմոբիլային պարկն աճեց մինչև 3808 ավտոմեքենայի:

Պարզ է ապրանքաշրջանառության և ճանապարհորդների տեղափոխման հսկայական աճը:

Սակայն, խորհուրդների ութերորդ համագումարը վճռական-

նորեն շեշտում է ճանապարհային շինարարության տեմպերի հետ մնալը՝ նրան ներկայացրած Ադրբեջանի բուռն վերելքով ապրող ժողովրդական տնտեսության կողմից: Դրա հետ միասին Խորհուրդների համագումարը մատնանշում է մի շարք խոշոր թերություններ՝ Ադրճանտրանսի աշխատանքում: Անբավարար դրության մեջ է և առկա յեղած ճանապարհային ցանցի սպասարկումը:

Վոչ-բավարար ռացիոնալ կերպով և դրա համար էլ քիչ էֆեկտով է օգտագործվում մեքենայական գործիքները ճանապարհային աշխատանքներում և պարզապես անբավարար է մեխանիզմների պլանա-նախազգուշական վերանորոգումը:

Առանձնապես թույլ է դրված ավտո-ճանապարհային կադրերի պատրաստումը: Բացակայում է հոգատարությունը՝ ավտո-ճանապարհային տեխնիկային տիրապետած մարդկանց վերաբերմամբ:

Խորհուրդների 8-րդ համագումարն առանձնապես անթույլատրելի յե համարում ճանապարհային շինարարության գործում կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների լայն մասսայի նախաձեռնությանն օժանդակելու ու ինքնագործություն կազմակերպելու գործում:

Խորհուրդների համագումարը գտնում է, որ ճանապարհային շինարարության և գոյություն ունեցող ճանապարհների սպասարկման անբավարար դրությունն ուղղակի արդյունք է թույլ ղեկավարության, նախ և առաջ Ադրդխճանտրանսի կողմից և ճանապարհի համար իսկական պայքարի բացակայության՝ մի շարք ռայոնական և առանձնապես բամբակային ռայոնների կազմակերպությունների (Սաբիր-Աբադ, Ալի-Բայրամլի, Կարյագինո, Ջեբրայիլ, Զանգելան, Կարադոնլի, Քյուրդամիր) կողմից:

Մատնանշելով ճանապարհային շինարարության խոշոր նշանակությունը՝ Ադրբեջանի ժողովրդական տնտեսության հետագա սոցիալիստական զարգացման գործում, Խորհուրդների 8-րդ համագումարը հանձնարարում է կառավարությանը.

1. Լայն ծավալել ԱՍԽՀ ճանապարհային տնտեսությունը.

ա) Համամիութենական, հանրապետական և տեղական նշանակություն ունեցող նոր ճանապարհների շինարարություն՝ առանձնապես բամբակային ռայոններում, նույնպես և հատուկ նշանակության ճանապարհներ.

բ) Լիակատար տեխնիկական վերակառուցում և խճակային ապահովումն գոյություն ունեցող ճանապարհների ընթացիկ ու հիմնական նորոգումների համար:

2. Մշակել և իրականացնել միջռայոնական և միջգյուղական



ճանապարհների շինարարությունը, այդ նպատակի համար օգտագործել կոլտնտեսականների ու աշխատավոր մենատնտեսների ինքնագործությունն ու նախաձեռնությունը:

3. Պատրաստված և ստուգված կադրերով ամրապնդել ու վերակառուցել ռայգործկոմների ճանապարհային բաժինների աշխատանքը, նրանց դարձնելով իսկական օպերատիվ օրգաններ, որոնք կոնկրետ կերպով ղեկավարեն ճանապարհային շինարարությունը և կազմակերպեն ազգաբնակչության մասնակցությունը գյուղերին, ռայոններին և կոլտնտեսություններին կցված ճանապարհների բարեկարգության ու կուլտուրական դրության մեջ դնելու գործում և խորհտնտեսություններին ու ՄՏԿ-ներին կից կազմակերպել հատուկ մեքենա-ճանապարհային խմբեր՝ ճանապարհային աշխատանքներ կատարելու, առաջին հերթին բամբակային ռայոնների սպասարկման համար:

4. Վճռականապես բարելավել Ադրդխճանտրանսի աշխատանքները, յելնելով անհրաժեշտությունից.

ա) Վճռականապես բարձրացնել մեխանիզմների օգտագործման էֆեկտիվությունը, և բարեկարգ դրության մեջ դնել մեքենայական բազան, մեծագույն չափով օգտագործելով ունեցած հասարակ մեքենայական գործիքները, ձիու փոցխերը, ձեռքի հարթիչները, հարդուկները և այլն:

բ) Տեղական արդյունաբերության գործարաններին և ձեռնարկներին կից կազմակերպել ճանապարհային մանր ինվենտարի և մեխանիզմների արտադրություն՝ նրանցով տեղամասերը, արվարձանները, նույնպես և ռայգործկոմներին ու գյուղխորհուրդները մատակարարելու համար:

գ) Ապահովել ավտոտրանսպորտի նորմալ շահագործումը, քննությունների իր ժամանակին կատարելը և պլանային-նախազգուշական վերանորոգումները:

դ) Բարձրացնել շոֆերի, մեքենավարի, ավտոկայանի պետի, ուղեմասի պետի անձնական պատասխանատվությունը՝ դեպի ավտոմեքենան ու մեքենական գործիքների պահպանման և խնամքով վերաբերմունքի համար:

ե) Սովորել և վերանայել ավտոճանապարհային ստորին և միջին վորակի կադրերի (վերանորոգողներ, ճանապարհային վարպետներ, տեխնիկներ, շոֆերներ) պատրաստելու սիստեմը: ուսումնական ծրագրերը,

Վերանայել տեխնիկումների առաջավոր տեխնիկայի ճանապարհային շինարարության մեջ առաջավոր տեխնիկայի արմատավորելու դիսցիպլինների ընդլայնելու անկյունաքարով, կապակցված ճանապարհային շինարարության մեջ առաջավոր տեխնիկայի արմատացման հետ:

1935 թ. ընթացքում ճանապարհային աշխատավորների ամառային վայրերի նախապատրաստում անցկացնել, որի համար կազմակերպել հատուկ դասընթացներ՝ 1500 ճանապարհային վարպետների, 500 բրիգադիրների, 100 տասնապետների և 500 նորոգող բանվորներ պատրաստելու համար:

գ) Միջոցառումներ անցկացնել ավտո — ճանապարհային աշխատավորների կուլտուր — կենցաղային սպասարկումը բարելավելու համար, գործնական օգնություն ցույց տալով բանջարանոցների և իրենց ինքնագործունեյա տնտեսությունները կազմակերպելու: Հատուկ ուշադրություն դարձնել բնակշինարարության և գծային կուլտուրական օջախների կազմակերպելուն:

ե) Գիտական — հետազոտական աշխատանքը ծավալել տեղական ճանապարհա — շինարարական հում նյութերի լայն օգտագործման համար, կապակցելով ամբողջ աշխատանքըն անդրկովկասյան և համամիութենական գիտական — հետազոտական ինստիտուտների հետ:

5. Դրա հետ միասին համագումարը ռայգործկոմների առաջ խնդիր է դնում, որպես ճանապարհների կուլտուրական պահպանման, ոչ միայն համամիութենական և հանրապետական նշանակություն ունեցող, այլ և տեղական նշանակության ճանապարհների անմիջական կանաչապատելու համար:

6. Համագումարը պարտավորեցնում է բոլոր պետական հիմնարկներին, տնտեսական և հասարակական կազմակերպություններին և կոչ է անում յերկրի բանվորներին, կոլտնտեսականներին ու աշխատավորներին ակտիվ մասնակցություն ունենալ ճանապարհային շինարարության ծավալման մեջ, որը հանդիսանում է անհրաժեշտ պայման՝ յերկրորդ հնգամյակի սոցիալիստական մեծագույն խնդիրների հաջող լուծման համար:



# 4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Լսելով սահմանադրական հարցերի մասին զեկուցումը խորհուրդների համաադրբեջանյան 8-րդ համագումարը վորոշում է.

I. ԱՍԽՀ Սահմանադրության մեջ մտցնել հետևյալ փոփոխությունները ու լրացումները.

1. Հոդված 2-րդում «Ադրբեջանյան հանրապետություն» բառերը փոխել «Ադրբեջանյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն» բառերով:

2. 3-րդ հոդվածի վերջում. «Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություններից ազատ դուրս գալու իրավունք»-ից հետո ավելացնել «և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունից այն կարգով, որը նախատեսնված է Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Սահմանադրությամբ»:

3. Հոդված 4-րդը տեղափոխել հոդված 13-րդում որպես նրա առաջին մասը:

4. Հոդված 5-րդը տեղափոխել 2-րդ և 3-րդ հոդվածների մեջտեղում:

Սահմանադրության բոլոր հոդվածներում «Խորհուրդների Ադրբեջանյան Համագումարը» և «Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն» բառերը փոխարինել «Խորհուրդների Համաադրբեջանյան Համագումար» և «Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտե» բառերով:

5. Հոդված 6-րդում «կրոնական և հակակրոնական պրոպա

ղանդայի ազատություն» բառերը փոխարինել «կրոնական դավանանքների և հակակրոնական պրոպագանդայի ազատություն» բառերով:

6. Հոդված 7-րդում «աշխատավորների համար կարծիքի արտահայտության փաստական ազատություն ապահովելու նպատակով» նախադասության մեջ «կարծիք» բառի առաջ ավելացնել «իրենց» բառը:

7. Հոդված 8-րդում «ճանաչելով քաղաքացիների իրավունքը՝ ժողովներ սարքելու» բառերը փոխարինել «ճանաչելով քաղաքացիների իրավունքը՝ ազատորեն ժողովներ գումարելու» բառերով:

8. Հոդված 13-րդի վերջում «Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը տրամադրում է Ադրբեջանի քաղաքացիների բոլոր քաղաքական իրավունքներն այն տարերկրացիներին, որոնք ապրում են Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության երկրամասում (տերիտորիայում) աշխատանքային զբաղմունքների համար» բառերը փոխարինել «Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը տրամադրում է բոլոր քաղաքական իրավունքները և այն տարերկրացիներին, որոնք ապրում են Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության տերիտորիայում՝ աշխատանքային զբաղմունքների համար» բառերով:

9. Հոդված 14-ում «քաղաքական գործունեության կամ կրոնական համոզմունքների համար» բառերը փոխարինել «հեղափոխական-ազատագրական գործունեության համար» բառերով, բացատրելով այն հետևյալ ձևով.

«Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունն ապաստանի իրավունք է տրամադրում բոլոր տարերկրացիներին, որոնք հալածանքի են ենթարկվում հեղափոխական-ազատագրական գործունեության համար»:

10. Հոդված 15-րդը բացատրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը, յելնելով քաղաքացիների հավասարությունից, անկախ նրանց կրոնական և ազգային պատկանելությունից, հայտարարում է միանգամայն անհամատեղելի հանրապետության հիմնական օրենքների հետ ազգային փոքրամասնությունների որևէ ճնշում կամ նրանց իրավահավասարության սահմանափակում և էլ ավելի՝ առանձին ազգությունների համար առավելություններ (ուղղակի կամ անուղղակի) սահմանում կամ թույլ տալը և ճանաչում է առանձին ազգությունների իրավունքը անջատվելու՝ նրանց խորհուրդների համագումարների որոշմամբ,



Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության վերադաս օրգանների հաստատումով, Ինքնավար Սոցիալիստական Հանրապետություններ և մարզեր կազմելու համար:

11. Ներկայումս գործող հոդված 15-րդի վերջին մասն առանձնացնել հատուկ հոդվածի, որն անմիջապես հետևում է նրան, բացատրելով այն հետևյալ ձևով.

«Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության պետական լեզուն հանդիսանում է թուրքերեն լեզուն»:

«Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության բոլոր քաղաքացիներն իրավունք ունեն և ապահովվում են նրանց լիովին հնարավորություն ազատորեն օգտվելու մայրենի լեզվով համագումարներում, դատարանում, դպրոցում, վարչական և հասարակական կյանքում»:

12. Հոդված 17-րդում «կազմում են բանվորա-գյուղացիական պետության սեփականություն, Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության օրենքների որոշման հիման վրա» բառերը փոխարինել «հանդիսանում են սոցիալիստական պետության սեփականություն, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հատուկ օրենքներով սահմանված հիմունքների վրա» բառերով՝ բացատրելով հետևյալ ձևով.

«Բոլոր հողերը, անտառները, ընդերքը, ջրերը, նույնպես և ֆաբրիկաներն ու գործարանները, յերկաթուղային, ջրային և օդային տրանսպորտը և կապի միջոցները հանդիսանում են սոցիալիստական պետական սեփականություն, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունների վերադաս օրգանների հատուկ սահմանած օրենքների հիման վրա»:

13. Հոդված 18-րդում, «ա» կետում «Սահմանադրության մեջ մասնակի փոփոխությունների վերջնական հաստատումը» բառերը փոխարինել «Սահմանադրության մեջ մասնակի լրացումների ու փոփոխությունների վերջնական հաստատումը» բառերով:

14. Հոդված 18-րդի «բ» կետում «Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրության վերջնական հաստատումը» բառերին ավելացնել «նույնպես և այդ սահմանադրության լրացումներն ու փոփոխությունները» բառերը:

15. Հոդված 19-րդի (բ) կետում «Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրության և

Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մարզի մասին կանոնադրության հաստատումը» բառերից հետո ավելացնել «այդ սահմանադրության և կանոնադրության լրացումների ու փոփոխությունների հաստատումը» բառերը:

16. Հոդված 19-րդի «ը» կետում «պետական մաքսերի վրա գերագույն վերահսկողություն» բառերին ավելացնել «և ծախսերի վրա» բառերը:

17. Հոդված [illegible]-րդի «խ» կետում «Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մարզի խորհուրդների համագումարների վորոշումների բեկանումն» բառերը փոխարինել «Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մարզի խորհուրդների համագումարների վորոշումների բեկանումն ու փոփոխությունները» բառերով:

18. Հոդված 22-րդը բացատրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Խորհուրդների Համաադրբեջանյան Համագումարը կազմվում է Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության խորհուրդների հանրապետական համագումարի և Ինքնավար Լեռնային Ղարաբաղի խորհուրդների մարզային համագումարի ներկայացուցիչներից, խորհուրդների շրջանային համագումարների ներկայացուցիչներից, շրջանի կազմի մեջ չմտնող քաղաքային ու շենային խորհուրդների ներկայացուցիչներից, հետևյալ հաշվով. 1 պատգամավոր 2000 ընտրողից այն բնակելի տեղերից, վորոնցում խորհուրդներն ընտրվում են ըստ ընտրողների քանակի և 1 պատգամավոր ազգաբնակչության ամեն 10.000 մարդուց այն բնակելի տեղերից, վորոնցում խորհուրդներն ընտրվում են ըստ ազգաբնակչության քանակի:

Քաղաքներին միացած գյուղական տեղերի ազգաբնակչությունը, վորն առանձնացված է ինքնուրույն վարչական-տնտեսական միավորի, ընտրում է ընդհանուր նորմայով սահմանված հանրապետության ամբողջ գյուղական ազգաբնակչության համար»:

19. Հոդված 27-րդում «Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և առանձին վարչությունների մտցրած» բառերը փոխարինել «Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության և Ադրբեջանյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի մտցրած» բառերով, բացատրելով հոդվածը հետևյալ ձևով.

«Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն հրատարակում է կոդեքսներ, դեկրետներ և վորոշումներ՝ իր անվա-



կան նախաձեռնության կարգով, նույնպես և քննարկում և հաստատում է այն օրինագծերը, վոր մտցվում են Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահության և Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից»:

20. Հոդված 34-րդից հանել «հետագայում այդ դեկրետներն ու վորոշումները մտցնում է Ադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի հերթական նստաշրջանը քննարկության և հաստատելու համար» և «հաստատում է աշխատանքի կարմիր դրոշի շքանշանով պարգևատրելը», բացատրելով հոդվածը հետևյալ նոր խմբագրությամբ.

«Համաադրբեջանյան Կենտրոնական գործադիր Կոմիտեյի նախագահությունն իրավունք ունի, ինչպես հաստատել Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումները, նույնպես և դադարեցնել և փոխել այդպիսիները, այլև հրատարակել դեկրետներ և վորոշումներ, քննության առնել միջնորդությունը՝ ներման մասին և Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի միջոցով հաստատման ներկայացնել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին, պարգևատրի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության շքանշաններով»:

21. Հոդված 36-րդում. «համապատասխան իրավունք ունի փոխելու Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Մարզային Գործադիր Կոմիտեյի վորոշումները» բառերը փոխարինել «համապատասխան իրավունք ունի դադարեցնել, փոփոխել ու բեկանել Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի ու Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Մարզային Գործադիր Կոմիտեյի վորոշումները»:

22. Հոդված 37-ում Անդրկովկասյան Ժողովրդական Կոմիսարիատների համապատասխան լիազորները» բառերը փոխարինել «Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունների և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության համապատասխան Ժողովրդական Կոմիսարիատների լիազորները» բառերով:

23. Հոդված 37-րդի ծանոթությունը հանել, լրացնել 37-րդ հոդվածը յերկրորդ աբզացով հետևյալ բովանդակությամբ.

«Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կազմի մեջ մտնում են նմանապես Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ

Խորհրդային Հանրապետությունների Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի Ադրբեջանի վարչության պետը, նույնպես և մյուս անձինք, Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի որոշման համաձայն»:

24. Հոդված 39-ից հանել «այդ խնդրի իրագործման համար է» բառերը:

25. Հոդված 41-րդում ավելացնել «և նրա նախագահության կողմից», բացատրելով այն հետևյալ կերպ.

«Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու է Խորհուրդների Համաադրբեջանյան համագումարի, Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և նրա նախագահության առաջ»:

26. Հոդված 42-ը հանել:

27. Հոդված 43-ը բացատրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ամեն մի որոշում կարող է բեկանվել, փոխվել կամ դադարեցվել Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ նրա նախագահության կողմից»:

28. Հոդված 44-ում «Ժողովրդական Տնտեսության Բարձրագույն Խորհուրդը, Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը, Աշխատանքի և Մատակարարման» բառերը փոխարինել «Արդարադատության, Կոմունալ տնտեսության, Տեղական արդյունաբերության և Ներքին առևտրի» բառերով:

29. Հոդված 45-ում «Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատ», «Բանվորա-Գյուղացիական Տեսչության Ժողովրդական Կոմիսարիատ», «Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդ», «Մատակարարման Ժողովրդական Կոմիսարիատ» բառերը փոխարինել «Տեղական Արդյունաբերության Ժողովրդական Կոմիսարիատ» բառերով:

30. Հոդված 47-ը բացատրել հետևյալ կերպ. «Ժողովրդական կոմիսարն անձամբ վճիռներ է ընդունում բոլոր հարցերի վերաբերմամբ, որոնք յենթակա յեն համապատասխան ժողովրդական կոմիսարիատի տնօրինության:

Ամեն մի ժողովրդական կոմիսարիատին կից հաստատվում է 2 ամիսը մեկ անգամ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հրավիրելը»:

31. Հոդված 48-ը բացատրել հետևյալ խմբագրությամբ.

«Ժողովրդական Կոմիսարներն իրենց աշխատանքներում պատասխանատու յեն Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի առաջ



և Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի ու նրա նախագահության առաջ»:

32. Հոդված 49-ում «Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարիատների կարգադրությունները կարող են փոխվել Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից»... բառերը փոխել «Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարիատների կարգադրությունները կարող են բեկանվել, փոփոխվել և դադարեցվել Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից...» բառերով:

Միևնույն հոդվածում. «Իսկ համաֆեդերատիվ ժողովրդական կոմիսարիատների կարգադրությունները» բառերը փոխարինել «Իսկ Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարիատների և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ժողովրդական կոմիսարիատների Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունում յեղած լիազորների կարգադրությունները» բառերով:

33. Հոդ. հոդ. 50 և 51 միացնել մեկ հոդվածում, բացատրելով այն հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության տերիտորիայի վրա սոցիալիստական օրինականության հաստատելու նպատակով, Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի սիստեմում Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Գերագույն դատարան և դատախազություն է հաստատվում:

Գերագույն դատարանի իրավասության մեջ են մտնում.

ա) Դատարանական վերահսկողություն Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության առանց բացառության դատարանական բոլոր օրգանների վրա:

բ) Բեկանման կարգով՝ ժողովրդական դատարանների վճռած գործերի քննություն:

գ) Վերահսկողության կարգով՝ բոլոր գործերի քննություն, որոնք վճռվում են Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ամեն մի դատարանի կողմից:

դ) Վորպես առաջին ատյանի դատարան՝ հատուկ պետական կարևորության քրեական և քաղաքացիական գործերի քննություն:

Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության դատախազության իրավասության մեջ են մտնում.

ա) Պետության անունից՝ Ադրբեջանի Սոցիալիստական Խոր

հրդային Հանրապետության տերիտորիայի վրա իրագործել իշխանության բոլոր օրգանների, տնտեսական հիմնարկությունների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների և մասնավոր անձանց օրինական գործողությունների հսկողությունը:

բ) Անմիջական հսկողություն և ղեկավարություն քննիչ օրգանների գործունեության, նույնպես և ընդհանուր հսկողություն և ղեկավարություն հարցաքննման օրգանների՝ հարցաքննության և խուզարկության կատարելու բնագավառում:

գ) Վճռագործության դեմ պայքարող բոլոր օրգանների գործունեության համաձայնեցում և ընդհանուր հսկողություն:

դ) Քաղաքացիական, քրեական և մյուս օրենսդրություններով նախատեսված դատախազային վերահսկողության փունկցիաների իրագործում:

ե) Հսկողություն դատավճիռների իրագործման, ազատազրկման ենթարկված անձանց կալանքի տակ պահելու օրինականության և ուղղիչ-աշխատանքային հիմնարկների դրության և գործունեության վրա:

34. Հոդված 60-ը բացատրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Խորհուրդների շրջանային համագումարները կազմվում են հետևյալ ներկայացուցիչներից. — քաղաքային խորհուրդների, բանվոր ազգաբնակչությամբ դերակշռող ավանային խորհուրդների, խորհտնտեսությունների, մեքենա-տրակտորային կայանների, քաղաքային սահմանից դուրս գտնվող փաբրիկների և գործարանների՝ 50 ընտրողներից մեկ պատգամավոր և ավանային խորհուրդներից՝ ուր դերակշռում է գյուղական տնտեսությամբ զբաղվող ազգաբնակչությունը, և գյուղական խորհուրդներից — ազգաբնակչության 250 մարդուց մեկ պատգամավոր, բայց ռայոնից — 300 պատգամավորից ոչ ավելի»:

Ծանոթություն. — Բացառիկ դեպքերում Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեին կամ նրա նախագահությանն իրավունք է տրվում փոխել սույն հոդվածով սահմանված առանձին տեղերի համար ներկայացուցչության նորման, համաձայն տեղական պայմանների:

35. Հոդված 64-ում «ռայոնական գործադիր կոմիտեներն ընտրում են նախագահություններ, որոնց անդամների թիվը որոշում է Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն» բառերը փոխել «ռայոնական գործադիր կոմիտեներն ընտրում են նախագահություններ, որոնց թիվն ամեն մի վարչական-տերիտորիալ միավորի համար որոշում է Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն կամ նրա նախագահությունը:



36. Հոդված 68-րդը բացատրել հետևյալ նոր խմբագրությամբ, հանելով նրան վերաբերվող բոլոր ծանոթությունները. «Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության տերիտորիայի վրա կազմվում և գործում են պատգամավորների խորհուրդները — քաղաքային, ավանային և գյուղական:

Ներկայացուցչության նորման քաղաքային, ավանային և գյուղական խորհուրդների համար, նույնպես և այդ խորհուրդների պատգամավորների թիվը սահմանում է համապատասխան խորհրդում ընդգրկված ընտրողների կամ ազգաբնակչության թվի հետ կապակցված—Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և կարող են բացառիկ դեպքերում փոփոխության ենթարկվել առանձին տեղերի համար Խորհուրդների Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից:

27. Հոդ. հոդ. 69 և 70 հանել:

38. Հոդ. հոդ. 72 և 73 միացնել մեկ հոդվածում, որը բացատրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ընթացիկ աշխատանքների համար պատգամավորների խորհուրդներն իրենց միջից ընտրում են գործադիր օրգան—խորհրդի նախագահություն, որը պատասխանատու է հանդիսանում խորհրդի ամբողջ աշխատանքի և խորհրդային իշխանության օրգանների որոշումների կատարման համար իրեն ընտրող խորհրդի և խորհրդային իշխանության բարձրագույն օրգանների առաջ»:

39. Հոդված 74-ում «պատգամավորների խորհուրդը հրավիրում է Գործադիր Կոմիտեն կամ խորհրդի նախագահը» բառերը փոխարինել «պատգամավորների խորհուրդը հրավիրում է խորհրդի նախագահությունը» բառերով:

40. Հոդված 77-ում «գործադիր կոմիտեները և նրանց նախագահությունները, նույնպես և պատգամավորների խորհուրդները» բառերից հետո ավելացնել «և նրանց նախագահությունները» բառերը:

41. Հոդված 77-ի «ա» կետի «կուլտուրականի և տնտեսական վերաբերմամբ» բառերը փոխարինել «տնտեսականի և կուլտուրականի վերաբերմամբ» բառերով:

42. Հոդված 77-ի «գ» կետը բացատրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«գ) Տվյալ տերիտորիայի սահմաններում, սոցիալիստական օրինականության և սոցիալիստական սեփականության պաշտ-

պանությունը, պետական կարգի և հասարակական անվտանգության ապահովումը»:

43. Հոդված 78-ում «տեղական համագումարների որոշումները կարող են փոխվել միայն վերադաս խորհուրդների համագումարների և նրանց գործադիր կոմիտեների, Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ նրա նախագահության կողմից» բառերը փոխարինել «խորհուրդների տեղական համագումարների որոշումները կարող են բեկանվել և փոփոխվել վերադաս խորհուրդների համագումարների, նրանց գործադիր կոմիտեների և համապատասխան դեպքերում վերադաս գործադիր կոմիտեների նախագահությունների կողմից, ինչպես և Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կամ նրա նախագահության կողմից» բառերով:

«Գործադիր Կոմիտեների և նրանց նախագահությունների որոշումները կարող են բեկանվել նրանց ընտրող համագումարների կողմից, ինչպես և վերադաս համագումարների կողմից...» բառերը փոխարինել «Գործադիր Կոմիտեների և նրանց նախագահությունների որոշումները կարող են բեկանվել և փոփոխվել նրանց ընտրող խորհուրդների համագումարների, նմանապես և վերադաս խորհուրդների համագումարների կողմից»:

44. Հոդված 79-ը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Ռայոնական գործադիր կոմիտեները կամ նրանց նախագահությունները կարող են դադարեցնել կյանքի մեջ կիրառելու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության որոշումները միայն բացառիկ դեպքերում՝ Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի սահմանած կարգով և հիմունքներով»:

45. Հոդված 81-ի «դ» կետում «դավանությունը» բառը փոխարինել «հավատադավան» բառով:

46. Հոդված 81-ի «զ» կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«զ) անձինք, որոնք դատապարտված են հանցագործության համար՝ պարտավորելով քաղաքական իրավունքները՝ դատարանական դատավճռի որոշման ժամկետով»:

47. Հոդված 96-ը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Տեղական բյուջեները կազմում են գործադիր կոմիտեները և պատգամավորների խորհուրդը և հաստատվում են խորհուրդների համապատասխան համագումարների կողմից կամ յենթակա դեպքերում գործադիր կոմիտեների կողմից, ինչպես և



պատգամավորների քաղաքային խորհրդի կողմից՝ Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության համապատասխան կենտրոնական օրգանների ընդհանուր վերահսկողության տակ»:

II. Հանձնարարել Համաադրբեջանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեին հրատարակել ԱՍԽՀ Սահմանադրության նոր տեքստը, վերջնականապես խմբագրելով այն, մտցնելով նրա մեջ փոփոխությունները ու լրացումները, որը մտցվում է սույն որոշումով, և համապատասխան հոդվածների համարակալման:

# VIII ՀՐԱՎԵՐԻ ՀԱՄԱԱԴՐԲԵՋԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ԿԱԶՄԸ

1. Ագրբա Ա.
2. Ախունդով Ռուխուլլա
3. Աղավերդիյեվ Գ. Բ.
4. Ախունդ-Զադե Դ.
5. Ալեքպերլի
6. Ավագյան Ա.
7. Աղայեվ Մահմուդ
8. Ասուստամով Լեվոն
9. Ալխազով Գ.
10. Ավանեսով (Հողժողկոմատ)
11. Արությունով Դ.
12. Ալիյեվ Շիրալի (Կիրովի ռայոն)
13. Ախունդով Շիրալի
14. Աղայևա Զումրուդ (Մանկավարժ)
15. Ալիյեվ Բաբա
16. Աղա Նեյմաթուլլա (հորատող վարպետ)
17. Այնա Սարիևա (կառուցող-ցեխի դարպասի բանվորուհի)
18. Ալյանով Հաջի Մամեդ
19. Ալիյեվ Աժդար
20. Աբասով Գ. Բ. (Հոկտեմբերյան ռայխորհուրդ)
21. Աղամյան Գ. (Ադրպրոֆխորհուրդ)

22. Ասլանով Ալի
23. Ալիյեվ Ջաբիր
24. Ալիյեվ Մանաֆ (Ադրխելխզխայի կարմիր բանակային)
25. Աբդուլլաևա Սոլթան Մամեդ կըզը (Բարդա)
26. Ալիյեվ Ռամազան (Բաքու 2-րդ կայար. սլաքավար)
27. Ալթայեվ Ախտաշուլա (Ազիզբեկովի ռայոն)
28. Աբյազով (հորատող վարպետ)
29. Ալիյեվ Ալեքսեյ (Սաբիր-Աբադ)
30. Ալեքպերով (Բեյլասուվար)
31. Ալի Կասում (Լենինյան ռայոն)
32. Աբդուլլայեվ (Վարդաշեն)
33. Ահմեդով (Գիլ)
34. Աբասբեյլի (Կարյագինո)
35. Ալիբեկով (Բարդա)
36. Ալի Մամեդով (Զագոտղերնո)
36. Առաքելով (Նարիմանովի ռայոն)
38. Ահմեդով Ա. (Զանգելան)
39. Աբդուլլայեվ (Մասալլի)
40. Աղամիրով (Մասալլի)
41. Աթաքիշիյեվ (Զարդոբ)
42. Աղամով Մ. (Ալի-Բայրամլի)
43. Արուստամով (Շահումյանի ռայոն)
44. Արուշանով (Շահումյանի ռայոն)
45. Ամիր Քերիմ (Պյատակովի անվ. գործ. Թորիչ)
46. Ալիյեվ Գյուլ Բալա (իզոլյացիայի ցեխի վարպետ)
47. Ալիխան Աբդուլ Կասում (փորատող վարպետ)
48. Ալահվերդիյեվա Բեգիմ (Աղդամ)
49. Աղասիյեվ Պերի (Հաշտարխան — Բազար)
50. Ականերովա Մարաֆ (Լենքորան)
51. Աղայևա Գյուլի (Սալյան)
52. Ասրյան Անուշ (Ի. Լ. Դ.)
53. Արուստամյան Արտաշես (Ի. Լ. Դ.)
54. Բերիա Լ.
55. Բաղիրով Մ. Ջ.
56. Բաղիրով (ԺՏՀԿ)
57. Բոնդարենկո Մ.
58. Բրեներ
59. Բեյլիս Ն.
60. Բորբով (Գետաբեկ)
61. Բոբրիշեվ (յերկաթուղի)
62. Բոգանով Վ. Պ.

63. Բաբլումյան Ա. Ի.
64. Բահրամով Ա. (Հողժողկոմատ)
65. Բաբան Ալի Աղա
66. Բալախնինսկիյ Զ.
67. Բելենկեյ
68. Բադիրբեկով Մ.
69. Բաբայեվ Ղուրբան (տպագրիչ)
70. Բուլիժկին Ա. (Նավատորմ)
71. Բադամյան Ս. (Ի. Լ. Դ.)
72. Բագիրով (Գեդաբեկ)
73. Բաբայեվ Թայիր (Հյուսիսոր վագոնա)
74. Բագիրով (Խաչմաս)
75. Բորշով Տ. (Կիրովաբադ)
76. Բաբաեա Ղըզըլ Գյուլ (Դիվիչի)
77. Բագիրովա Բասթի (Կասում - Իսմայիլլի)
78. Բալա Խանում Հաջի գզի (Շամխոր)
79. Վասիլկին Գ.
80. Վեզիրով Գամբայ
81. Վորոշիլով Գ. (Լենինյան ռայոնի վարպետ)
82. Վարունց Կ.
83. Վեզիրով Հեյդար
84. Վելիյեվ Հուսեյն (Աղդամ)
85. Վելիխանով (Զաքաթալի)
86. Վերդիյեվ (Ղազախ)
87. Հուսեյնով Միքայել
88. Գուրևիչ Գ.
89. Գուլբեա Ր. Ի.
90. Գայիբլի (Պրոֆմիություն)
91. Հասանբեկով
92. Գոլուբյեվ Մ. (Լենինյան ռայոն)
93. Ղազարյան Գ. (Օրջոնիկիձեյի հանք)
94. Գյուլիջինսկի Մ.
95. Գլուշչենկո Յ. Ի.
96. Հուսեյնով Ռահիմ
97. Հաջիմ Զադե Բիլգեյա
98. Գյուլմալի Ալի (փականագործ)
99. Գինդին Ա. Մ.
100. Հուսեյնով Հուսեյն
101. Հուսեյնով Մուսեյիբ
102. Հաջիյեվա Ֆաթմա



103 Գասպարով Հասան
104. Հաջիյեվ Ջեյնալ (Աղդամ)
105. Գրիգորյան Տ. (Ստեփանակերտ)
106. Հուսեյնով Ս. (Իսմայիլլի)
107. Հաջիյեվ Շ. (Աստարա)
108. Գուլիյեվ (Մոնտինի անվան գործարանի խառատ)
109. Գարբիներովա Լ. (Կառուցման բաժնի բանվորուհի)
110. Գալկինա Ե. (յուղող)
111. Գոհար Բաջի (Աղջաբեդի)
112. Գյուլբաբադին Աբդուլլա ղզի (Թաուզ)
113. Ջաֆարով Ակպեր
114. Դադաշեվ Մուսա (Լենինի անվ. հանք)
115. Ջաֆարով Սաֆար
116. Դոլբալթով Ի. Ի.
117. Դադաշեվ (Աղջաբեդի)
118. Դավուդով (Դիվիչի)
119. Ջաֆարով (Ղոնաղքենդ)
120. Դամիրով (Շամխոր)
121. Դաղլի (Բեյլական)
122. Բողդոլովա Ֆաթմա (Բեյլական)
123. Ջաֆարով Աբաս Կուլի (Կասում - Իսմայիլովո)
124. Դադաշևա Սոնա (Ղալա - Մաշտաղի)
125. Յերմակով (խորհտնտեսություն)
126. Յենգիբարով (պրոֆմիություն)
127. Յեղիզարով (Քյուրդամիր)
128. Ջաբիյեվա Սառա (Ղոնաղքենդ)
129. Ջայիրով (Թաուզ)
130. Ջեյնալով (Շահումյանի ռայոն)
131. Ջոֆ.
132. Զադրա Վ.
133. Իվանով Ա.
134. Իսայեվ Թախսիր (հանքափոր վարպետ)
135. Իսակով (Կասպյան նավատորմ)
136. Իսմայիլով Ռմուզ (Կիրովաբադ)
137. Իսմայիլով (Ադրկոմյերիտկենտկոմ)
138. Իլինսկիյ
139. Իբրահիմով Ա. Ս.
140. Իբրահիմով Սեյֆուլլա
141. Իբրահիմով Ն.
142. Իմամի (Նախիջևան)

143. Կամբաձե (Արտեմի կղզի)
144. Կուզմին (Կալայի հանք)
145. Կուլիկով Մ. (Որջոնիկիձեյի անվան ռայոն)
146. Կարապետով Արմենակ
147. Կադըրլի Մ.
148. Կարայեվ Ասադ
149 Կոնուշկին Ի.
150. Կասումով Միր Բաշիր
151. Կարաև Բեգլյար (Հանքավոր)
152. Կուլիկով Փ. (Ձերժինսկու անվան գործարանի դարբին)
153. Կերիմովա Թեյրան (Ալի – Բայրամլու)
154. Կադիրովա Սալիաթ (Զաքաթալի)
155. Կերիմովա Սուղրահի (Շամախի)
156. Կուլիյեվ Դ. (Կիրովաբադ)
157. Կաֆարով (Աղդաշ)
158. Կաֆար – Զադե (Զաքաթալի)
159. Կուլիյեվ (Քելբաջար)
160. Կուլիյեվ Ս. (Խիզի)
161. Կերիմով (Զուվանդ)
162. Կասումով Միրզա (Քելբաջար)
163. Կյազիմով Ջաֆար (Ազոզֆանի ինժեներ)
164. Կաֆիև (Ազսովխոզտրեստ)
165. Կասիմով Կասիմ
166. Կորոլեով (սահմանապահ ջոկատ)
167. Կադարով Ռեշիդ (Բուդյոննու անվ. գործ. խառատ)
168. Կլիմենտիևա Յ. (Միասնիկովի գործ. բանվորուհի)
169. Կորոլկով Վլադիմիր (Արտեմի անվ. հանքի մեքենավար)
170. Լիմար
171. Լոպներ (Պետաքյան)
172. Լյուբիմով-Գուրևիչ (Արդժողկոմատ)
173. Լեբեդև Ն. (կոմսոմոլ)
174. Մաշտակով Գ.
175. Մաչկեվիչ Մ.
176. Մախնով (Ստալինյան ռայոն)
177. Մելքումյան Վ.
178. Մանուչարով Մ. (Ստալինյան ռայոն)
179. Մեջիդով (ԱԼԿՑԵՄ կենտկոմ)
180. Մուրադով Մուսա (Սաբիր – Աբադ)
181. Մամեդով Հեյդար (Նախ. ԽՍՀ)
182. Մամեդով Ալի (Նախ ԽՍՀ)



183. Մուսայևա Գ. (Լաչին)
184. Մկրտիչևա Ս. (Ստալինի անվ. գործարանի թորիչ)
185. Մեխմանով (մոնտյոր)
186. Մակսիմչենկո (Պյատակովի անվ. գործարանի բանվոր)
187. Մամեդովա Մ. (Լենինի անվ. ֆաբ. մանածագործ)
188. Մամեդ Միրզա օղլի (Աղդաշ)
189. Մամեդով Ալի Աբաս (Վերդյադուզ)
190. Մամեդովա Հուրի (Գյոքչայ)
191. Մելիկովա Սուլդուզ (Ղուբա)
192. Մակսուդով (Բեյլական)
193. Մուրադով Ն. (Ջեբրայիլ)
194. Մելքումով Վ. (Ի. Լ. Ղ.)
195. Մերնիկով Վ. (խորհտնտեսություն)
196. Մուխտար Ֆաթմալի
197. Մամեդով Գ. (Ազգոսպրոեկտ)
198. Մուրադ – Բեյլի (Միկոյանի անվ. հանք)
199. Մեհալիև Ա. Գ. (Աղշուկ)
200. Մուստաֆեյան Մինաս (Վորոշիլովի ռայոնի հացթուխ)
201. Մուխին Մ. (բոցման)
202. Նազարով Մեջիդ (Զուվանդ)
203. Նարիմանով Մ.
204. Նադիլլա Ջալիլ օղլի (Նուխի)
205. Նիկիտին (Հեռավոր հետախուզումների տրեստ)
206. Նավթուլայեվ (Բաղխորհուրդ)
207. Նաջաֆով Ռզա (ՄՏԿ քաղբաժին)
208. Նայիբով Մ.
209. Նովրուզով Ր. (Նախ. ԽՍՀ)
210. Նադիրյեվ Ջհանգիր (Հաշտարխան – Բազար)
211. Նովրուզով (Իսմայիլլի)
212. Նադիրյեվ Ա. (Բարդա)
113. Որուջով Մ. Տ. (Թաուզ)
214. Օկինչեվիչ (պրոֆեսոր)
215. Պետրոսյան Ս. Ա.
216. Ովանեսյան (հակաօդային պաշտպ. գնդապետ)
217. Պոպով Պ. (պրոֆեսոր)
218. Պոպով Գրիգորի
219. Պաշա – Զադե (Հողժողկոմատ)
220. Պրոնդենիս Ս. Խ.
221. Պրոխորով (կապ)
222. Պլեչակով Մ.
223. Պուրնիս

224. Պանցխավա Վ.
225. Պոխոմովա Ա.
226. Պոլյակովա Ե. (կազմարարուհի)
227. Պոդշնյակովա Վ. Մյասոկոմբինատի բանվորուհի)
228. Պոլիկարպով Ն. (հանքափոր վարպետ)
229. Ռահմանով Հուսեյն
230. Ռահմանով Հասան
231. Ռոդիոնով Ե.
232. Ռահմեյևա Մ.
233. Ռուսաևսկի Ս.
234. Ռասուլ - Զադե Դ. (Կուսհրատ)
135. Ռահիմով Ջամիլ
236. Ռիխարյեվ Տ. Ի.
237. Ռաշիդ Արմենակ
238. Ռդայեվ Բ.
239. Ռզակուլիեվ Կաֆար (Կասպար)
240. Ռասուլով Լ.
241. Ռաջաբով (Լենքորան)
242. Ռուստամով (Նուխի)
243. Ռահմանով Հասան
244. Ռասուլ - Զադե Ա. Գ.
245. Ռոժդեստվենսկի Մ. (ավիացիա)
246. Ռահիմով Աղա («Բակ. Ռաբոչի» գործ. փականագործ)
247. Սումբատով Յու.
248. Սինայսկիյ
249. Սուլթանով Համիդ
250. Սուլթանովա Այնա
251. Սաֆարով Հասան
252. Սմորոդինսկիյ Ե. (Բաքսպառկոոպ)
253. Սոկոլով Վ. Ա. (Ձերժինսկի ռայոն)
254. Սարաբսկի Գ. Կ. (արտիստ)
255. Սալախով Տ. (Լաչին)
256. Սարդարլի Ա. Ա. (Նորաշեն)
257. Սաֆարով Բ. (Կասում - Իսմայիլլի)
258. Սեյիդ - Բեյլի Զուլֆագար
259. Սադիխով Ա. Ր. (Վորոշիլովի ռայոն)
260. Սալամով (Կիրովի անվ. հանք)
261. Սրուցկիյ
262. Սչաստլիվցեվ (հանքափոր վարպետ)
263. Սադըխովա Սառա (№ 4 Ֆաբրիկայի կար անոց)



264. Սկոբելցովա (տրիկոտաժ կոմբինատի բանվորուհի)
265. Սավադով Թարխան (Շմիդտի անվ. գործ. ձուլող)
266. Սորոկինա (Ազնեֆթի բանվորուհի)
267. Սմոդինա Ա. (Ստալինի անվ. արհեստ. բանվորուհի)
268. Սաֆարով Գ. (շահագործման բրիգադիր)
269. Սենյան Կախան (Շահումյանի ռայոն)
270. Պետերսոն Ա.
271. Ստարաշչիկլի Լիզա (Կախի)
272. Սամեդշիխի Թաիր օղլի (Կուտկաշեն)
273. Թալիբլի Բ. Ա.
274. Տոկարյեվ (Շամխոր)
275. Տոնյան (Կասում - Իսմայիլու)
276. Թադևա Նատալիա
277. Տրուժանսկի (ավիացիա)
278. Տիխոմիրով (Բաքվի հեռախ. դպրոց)
279. Ուստուբով Աբդուլ
280. Ուսեյնով Սաֆար
281. Ուլյանով Իվան
282. Ֆարաջ - Զադե Ասկեր
283. Ֆարզալիյեվ (Աղդաշ)
284. Ֆրոլով Ն. (Հաշտարխան - Բաքու)
285. Ֆաթուլաև (Ղազախ)
286. Խանփերյան Լազար
287. Խոջայեվ Սալեխ (Շմիդտի անվ. գործարան)
288. Խալա Մամեդ օղլի (Քելբաջար)
289. Փերի Իսմայիլ Ղզի (Գիլ)
290. Խասայեվ Մ. (Սալյան)
291. Խաչումով (Աղդաշ)
292. Խանչա (կարմիր նավատորմային)
293. Խրուստալյով
294. Զուբար
295. Զալյան Մ. Մ.
296. Զուրկինա (Նեֆթեզավոդստրոյի զոդող)
297. Շահբազով Մուսեյիբ:
298. Շամսադինսկի Մ.
299. Շուստ Վ.
300. Շահվերդյան Հմայակ
301. Շախմարդանով (Զաքաթալա)
302. Շիր Մամեդ Բաբա Խալիլ օղլի (Իսմայիլլի)
303. Շխսեյիդով (Կարադոնլի)
304. Շաբուրով Սաբիր - Աբադ)

305. Շուլման (Կարադոնլի)
306. Շամխրովա Գանիֆա (Ղազախ)
307. Շահմամեդովա Ա. (Կարադոնլի)
308. Շեկինսկիյ Ե.
309. Շերեմետևվա (խողովակ կարող)
310. Եֆենդիյեվ Մ.
311. Եֆենդիյեվ Բալա (Լենքորան)
312. Եյուբով Ս. (Գյոքչա)
313. Եմինով (Լաչին)
314. Եմիրչախ
315. Եյվազով Ա.
316. Յուզովիչ Վ. (Ազնեֆթ բանմատվարչություն)
317. Յուսուֆով Համիդ (Հողժողկոմատ)
318. Յակուբով Սեյիդ
319. Յակուբով Համիդ
320. Յասաման Կարա ղզի (Զանգելան)

---

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
Туркменская государственная библиотека
ՀՀ Ազգային գրադարան
NL0196240